

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՅՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՊՐԱԳԱ ԲԺԻՇԿ

2015 ԹՎԱԿԱՆ N 3-4 (1314-1315) ՄԱՐՏ





ՄԱՐՏԻ 1 ԳԱՐՆԱՆ ԱՌԱՋԻՆ ՕՐ



ՄԱՐՏԻ 8 ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ



Նախկինում կանանց տոնը՝ մարտի 8-ը, ներկայումս կանանց միամսյակի սկիզբն է ազդարարում: Այնպես որ՝ մարտի 8-ից մինչև ապրիլի 7-ը առավել ուշադիր եղեք կանանց և աղջիկ-

ների նկատմամբ, հատկապես, որ նրանք լիովին արժանի են ձեր ուշադրությանն ու համակրանքին, սիրելի տղաներ և տղամարդիկ:

ՄԱՐՏԻ 2

ՄԻՔԵԼԱՆՁԵԼՈ ԲՈՒՈՆԱՐՈՏԻ-540 (1475 -1564)



Վերածննդի դարաշրջանի իտալացի քանդակագործ, գեղանկարիչ, ճարտարապետ և պոետ Միքելանջելոն մահից առաջ թելադրել է իր կտակը՝ իրեն բնորոշ քախտությամբ. «Ես հանձնում եմ հոգիս Աստծուն, մարմինս՝ հողին, ունեցվածքս՝ բարեկամներիս»:

ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ

Գլխավոր խմբագիր
ՍԵՂԱ ԽԱԶՍՈՒՐԻ ԹՈՐՈՍՅԱՆ

Editor SEDA TOROSYAN

Թղթակից

ԱԻՂԱ ՀԱԿՈՒՅԱՆ

Անգլերեն նյութերի պատասխանատու

ԱՆԱՅԻՏ ԴԵՄՈՒՐՉՅԱՆ

Համակարգչային ձևավորումը

ՎԱՐԴՈՒՀԻ ՍԵԼԻՔՍԵԹՅԱՆԻ

Լրատվական գործունեություն իրականացող՝

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական

բժշկական համալսարան» հիմնադրամ:

Թերթը գրանցված է ՀՀ արդարադատության

նախարարությունում:

Գրանցման վկայական N 299: Տպագրվում է

«ԼԵԳԱԼ ՊԼՅՈՒՍ» ՄՊԸ հրատարակչությունում:

Հասցե՝ Երևան 0025, Կորյունի փ. 2

Հեռախոս՝ (060) 62-12-46, 2-46, 2-47

E-mail: apagabzhishk@ysmu.am

Ծավալը՝ 44 էջ:

Տպաքանակը՝ 500 օրինակ:

Անվճար

ՄԱՐՏԻ 10

ՎԱՐԴԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑ-155 (1860 -1921)

«Նկարը պետք է արտահայտի կյանքն այնպես, ինչպես այն երևում է մեր աչքին»:

Վարդգես Սուրենյանցը ապրել և ստեղծագործել է օտար երկրների տակ, բայց իր ամբողջ էությունը և հոգու ամեն մի թելով կապված է եղել հարազատ ժողովրդին, եղել նրա բախտակիցը, հույզերի ու խոհերի թարգմանը:





ՄԱՐՏԻ 21

ՊՈՆՁԻԱՅԻ ՀԱՄԱՇԽԱՐԴԱՅԻՆ ՕՐ

1999-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի 30-րդ նստաշրջանի գլխավոր կոնֆերանսում որոշում է ընդունվել մարտի 21-ը սահմանել պոնզիայի համաշխարհային օր: Այն առաջին անգամ ընդվել է Փարիզում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում:

«Պոնզիան կարող է պատասխան տալ ժամանակակից մարդու ամենասուր և խորը հոգևոր հարցերին,- ասված է կազմակերպության որոշման մեջ,- սակայն դրա համար անհրաժեշտ է պոնզիայի վրա գրավել հասարակական լայն հանրության ուշադրությունը»:

Ավելին պոնզիայի համաշխարհային օրը կոչված է հնարավորություն ընծեռել փոքր հրատարակչություններին ավելի հայտնի դառնալ. չէ՞ որ հենց նրանց շնորհիվ են հիմնականում ընթերցողին հասնում ժամանակակից բանաստեղծների ստեղծագործությունները:

ՅՈՐԱՆ ՍԵՐԱՍԻԱՆ ԲԱՆ-330 (1685 - 1750)

Բարոկկո դարաշրջանի գերմանացի կոմպոզիտոր, երգեհոնահար և ջութակահար: Բախը երաժշտության պատմության մեջ մեծագույն երգահաններից է, պոլիֆոնիայի վարպետ, կյանքի ընթացքում գրել է 1.000-ից ավելի ստեղծագործություններ:

Բախի բազմազան ու խոր ժառանգության վեհությունը գնահատելով՝ Բեթհովենը գրել է. «Ոչ թե առվակ, այլ ծով պետք է լիներ նրա անունը»:



ՄԱՐՏԻ 22

ՋՐԻ ՀԱՄԱՇԽԱՐԴԱՅԻՆ ՕՐ



Ջուրը կյանքի սկզբնաղբյուրն է, առանց որի հնարավոր չէ ապրել: Այն համարվում է մաքրության և պտղաբերության խորհրդանիշը:

Դարեր առաջ, երբ մարդիկ փոխադարձ հարգանքն ավելի թանկ էին գնահատում, քան ոսկին՝ աղբյուրների վրա գրում էին.

«Ճամփորդ, կանգնիր և խոնարհվիր: Աղբյուրի ջուրը երիտասարդներից ուժ է տալիս, ծերերին վերադարձնում առողջությունը, կանանց տալիս է գեղեցկություն և սեր...»:

ՄԱՐՏԻ 23

ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐԴԱՅԻՆ ՕՐ

Եղանակի մասին առաջին վկայություններ եղել են վաղ անցյալի իրադարձություններում: Դեռևս 17-18դդ. սկսել են գրանցել ամենօրյա տեղեկություններ եղանակի մասին: Իսկ բարոմետրի հայտնագործումից հետո փորձեր ձեռնարկվեցին կանխատեսել եղանակի փոփոխությունները մթնոլորտային ճնշման փոփոխությամբ:


1872-ին հիմնադրվեց միջազգային օդերևութաբանական կազմակերպությունը (ՄՕԿ): 1947-ի հոկտեմբերի 11-ին ստորագրման ներկայացվեց Կոնվենցիան, որի արդյունքում կազմավորվեց Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպությունը (ՉՕԿ) ՄՕԿ-ի փոխարեն: 1950-ի մարտի 23-ին Կոնվենցիան ուժի մեջ մտավ:

ՄԱՐՏԻ 27

ԹԱՏՐՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

Այս օրը հռչակվել է 1961-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի թատրոնի միջազգային ինստիտուտի 9-րդ կոնգրեսի կողմից: Նպատակը՝ ազգերի միջև խաղաղության և բարեկամության ամրապնդմանը, աշխարհի բոլոր թատերական գործիչների համագործակցությանը նպաստելն է: Թատրոնի միջազգային օրվա առթիվ առաջին ուղերձը 1962-ին գրել է ֆրանսիացի գրող և նկարիչ ժան Կոկտոն:

Նշենք, որ ամեն տարի մարտի 27-ին Հայաստանի թատերական գործիչների միությունը կազմակերպում է «Արտավազը» մրցանակաբաշխությունը, որը հնարավորություն է ընծեռում գնահատել թատերարվեստի գործիչների նախորդ տարվա ձեռքբերումները:



**ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀՊՈՒՄ
ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻՆ՝
ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՄԻԱՄՍՅԱԿԻ
ԱՌԻԹՈՎ**



Սիրելի՛ կանայք և աղջիկներ,
ջերմորեն շնորհավորում եմ ձեզ
կանանց միջազգային տոնի՝
Մարտի 8-ի կապակցությամբ:
Անգնահատելի է հայ կնոջ դերը
մեր ժողովրդի պատմության
կերտման, մեր պետության
կայացման գործում, քանի որ հայ
ընտանիքի անրության, նոր սերնդի
դաստիարակության, մայրենի
լեզվի ու մեր ժողովրդի ազգային
դիմագիծը պահպանելու
առաքելությունն, առաջին հերթին,
դրված է ձեր ուսերին: Եվ
համոզված եմ, որ շարունակելու
եք այդ աստվածատուր
առաքելությունը՝
ի շահ մեր երկրի, ի բարօրություն
մեր ժողովրդի:

Սիրելի՛ կանայք և աղջիկներ, մեկ
անգամ ևս շնորհավորում եմ ձեզ
գարնանային այս գեղեցիկ տոնի
կապակցությամբ և մաղթում
առողջություն և բարօրություն ձեզ
և ձեր ընտանիքներին, սեր,
ընտանեկան ջերմություն և
երջանկություն:

**ՄԻՔԱՅԵԼ ՆԱՐԻՍԱՆՅԱՆ
ԵՊԲՀ ղեկավար**

«ԿՅԱՆՔՆ, ԻՆՉՊԵՍ ՄԻ ՑՈԼՔ...»

ՀՀ առողջապահության նախարար Արմեն Մուրադյանի նախաձեռնությամբ իրականացվող «Կոչումով բժիշկ» նախագծի շրջանակներում կազմակերպված միջոցառումների շարքը նվիրված էր ականավոր բժիշկ-գիտնական, առողջապահության հնուտ կազմակերպիչ, պետական և հասարակական գործիչ, ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի հիշատակին: Մեծարման օրը սկսվեց անվանի գիտնականի շիրիմին այցելությամբ: Նույն օրը Մոսկովյան 31 հասցեում տեղադրվեց ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի հիշատակը հավերժացնող հուշաքար:



Այնուհետև գեղեցիկ ելույթով Էմիլ Գաբրիելյանին հարգանքի տուրք մատուցեց «Կոմիտաս» ազգային քառյակը:

Իրենց ընկերոջ մասին հիշողություններով կիսվեցին նաև պրոֆեսորներ Էդուարդ Թադևոսյանը, Սիմեոն Հախումյանը և գրող-իրապարակախոս Ջորի Բալայանը:

Հուշաքարի բացման արարողությանը հաջորդեց հանդիսավոր միջոցառում Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանում, որին ներկա էին ՀՀ առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը, առողջապահության փոխնախարարներ, ոլորտի հայտնի ներկայացուցիչներ, մեծարվողի դուստրը, մտավորականներ, արվեստագետներ:

Միջոցառման բացումը հայրապետական օրհնանքով ազդարարեց Տաթև սրբազանը, որին հաջորդեց առողջապահության նախարար Արմեն Մուրադյանի ելույթը: «Այսօր մեզ միավորել է մի մարդ, ով օժտված էր ոչ միայն կազմակերպչական շնորհով, այլև իր էությամբ կարողանում էր հայրենասիրություն սերմանել բոլորիս մեջ, լինել առաջադիմության ջատագով: Ցանկանում եմ ձեզ ներկայացնել 10 օր առաջ Կառավարության ընդունած որոշումը, համաձայն որի՝ դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնը այսուհետ կկրի Էմիլ Գաբրիելյանի անունը:

Գաբրիելյանների ընտանիքը սկսել է գեղեցիկ նախաձեռնություն, որի շուրջ համախմբվել ենք բոլորս, այն է՝ ստեղծել մի հիմնադրամ, որը տարին մեկ անգամ լավագույն բժշկական կազմակերպչին, հիմնարկին կշնորհի նրա պարտավորեցնող անունը կրող մրցանակ, ինչպես նաև լավագույն ուսանողին՝ կրթաթոշակ»:




Միջոցառման ավարտին ցուցադրվեց Էմիլ Գաբրիելյանի գործունեությանը նվիրված «Կյանքն, ինչպես մի ցուլք...» փաստագրական ֆիլմը, որտեղ անվանի գիտնականի գործընկերներն ու ընկերները, ընտանիքի անդամները նրան ներկայացնում են մեծ գիտնականի, մանկավարժի, առողջապահության կազմակերպչի, ավագ գործընկերոջ, հոգատար հոր և պապի կերպարներում:



Գաբրիելյանների ընտանիքի անունից շնորհակալական խոսք ասաց ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի դուստրը՝ Կարինե Գաբրիելյանը, ով այսօր ԱՄՆ-ում հայտնի ակնաբույժ է. «Ասում եմ՝ մարդը կենդանի է այնքան ժամանակ, քանի դեռ ապրում է ուրիշների սրտերում: Տեսնելով այս բազմամարդ դահլիճը՝ ցանկանում եմ ասել, որ հայրս՝ Էմիլ Գաբրիելյանը, կենդանի է առ այսօր»:



«ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՂՆԵՐԻՑ Է ՀՀ ԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ»



Երևանի Մ.Ֆերացու անվան պետական բժշկական համալսարանում տեղի ունեցավ էլեկտրոնային գրադարանի նոր սրահի բացումը, որին ներկա էր ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը:

Բացման հանդիսավոր մասից հետո նախարարը ԲՈՒՀ-ի ղեկավարության հետ շրջեց սրահում, ծանոթացավ կատարված աշխատանքներին և համակարգչային քննությունների իրականացման ընթացքին. նորաբաց սրահը նախատեսված է նաև դրանց անցկացման համար:

Շրջայցից հետո նախարարն ասաց. «Այսօր արձանագրում են, որ բժշկական համալսարանը հերթական անգամ ապացուցում է, որ կրթական նորագույն տեխնոլոգիաների ներմուծողներից է մեր բուհական համակարգում:

Այս էլեկտրոնային լսարանը թույլ է տալիս լուծել երկու հիմնական նպատակ: Առաջինը էլեկտրոնային գրադարանն է, ինչը նորություն չէ, սակայն հնարավորություն է ընձեռելու ուսանողներին մոտք գործել էլեկտրոնային կրթական պաշարների մեջ: Այս տեսակետից և՛ 100 տեղ գրադարանում բավականին զգալի ներդրում է: Երկրորդը, ինչն ավելի հետաքրքիր է, էլեկտրոնային քննությունների տարբերակն է: Մենք գիտենք, որ քննությունների օբյեկտիվության բարձրացման հիմնական գործոններից մեկը մարդկային գործոնի վերացումն է կամ նվազեցումը: Այդպիսի քննությունը թույլ է տալիս գրեթե վերացնել անմիջական շփումը դասախոսի հետ, կտրուկ նվազեցնում է կոռուպցիոն ռիսկերը և բարձրացնում է օբյեկտիվությունը: Շատ կարևոր է այն հանգամանքը, որ այս լսարանն օգտագործվելու է նաև ուսման պրոցեսում, այսինքն՝ սա միայն քննական լսարան չէ, այլ ուսուցողական, կրթական տեխնոլոգիա է, որը թույլ է տալու ուսանողներին՝ բացահայտել իրենց ուժեղ և թույլ կողմերը: Մեր համակարգի բարեփոխումների արդյունքում քննադատության մի մասը վերաբերում է նրան, թե արդյո՞ք թեստային քննությունը այն քննության լավագույն տարբերակն է, որը թույլ է տալիս երեխայի գիտելիքն իրականում ստուգել ամբողջությամբ: Ես մասամբ համաձայն եմ այս քննադատության հետ, քանի որ երկար տարիներ ու դեռևս շատ տեղերում մեր թեստերը կրում են մեխանիկական բնույթ, և ուսանողները թեստերի հաջող լրացումը չեն նույնականացնում գիտելիքի ձեռքբերման հետ: Ուսանողները պարապում են թեստեր՝ ոչ թե առարկան:

Այսօր միջազգային մանկավարժության մեջ ճիշտ թեստեր կազմելը առանձին գիտություն է: Մեր դասախոսները պետք է կազմեն անպիսի թեստեր, որոնք կբացահայ-



տեն ուսանողների գիտելիքները, ոչ թե ուսանողները պարզապես մեխանիկորեն կվերարտադրեն անգիր արած ինչ-որ երևույթներ: Սա, իհարկե, դասախոսներից պահանջում է հմտություն: Բժշկական համալսարանը այս տեսակետից պրպտող ԲՈՒՀ-երից մեկն է, որ պարբերաբար փորձում է թեստաբանության նոր տեխնոլոգիաներ, բարդացնում է թեստերը, փոխում է դրանց բովանդակությունն ու փիլիսոփայությունը: Չեմ կարող ասել, որ դրանք զերծ են քննադատությունից, բայց, այնուհանդերձ, պարբերաբար նոր դրսևորումներ են առաջ քաշում կրթության կազմակերպման գործընթացում: Մնում է, որ ուսանողները լիարժեք օգտագործեն այս լսարանը ոչ



Կա նման առաջարկություն, և բուհական այս փորձերը, ի դեպ, նույնպես շատ կարևոր են: Վերջիվերջո՝ կուտակվում է փորձ, և եթե այսպիսի քննական կենտրոններ լինեն բոլոր ԲՈՒՀ-երում, հետագայում դրանք կարող են օգտագործել ընդունելության քննությունների և ինչու ոչ՝ նաև միասնական ավարտական պետական քննությունների համար, որն ավելի կարևոր է կրթության որակը գնահատելիս, քան ընդունելության քննությունները:

Գուցե ոչ այդքան ժամանակակից, որքան բժշկական համալսարանում է, սակայն որոշ ԲՈՒՀ-երում էլ՝ տնտեսագիտական համալսարանում, Երևանի պետական համալսարանի որոշ ֆակուլտետներում կան համակարգչային լսարաններ: Սակայն, իհարկե, այս ծավալի և այս տեխնիկական լուծումների լսարաններ դեռ չկան: Վստահ եմ՝ ԲՈՒՀ-երը նաև իրարից սովորում են, միմյանց հետ փորձ են փոխանակում:

Ինչպես միշտ բավականին մեծ էր լրագրողների հետաքրքրասիրությունը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի հնչեցրած գնահատումների առնչությամբ:

միայն քննությունների համար, այլ, նախևառաջ, քննությունների միջև ընկած ժամանակահատվածում, որպեսզի սովորեն և գան՝ վերահաստատելու իրենց գիտելիքները: Սա երկրորդ նմանատիպ լսարանն է բժշկական համալսարանում, և կարծում եմ՝ ոչ վերջինը, քանի որ կա առաջարկություն, գաղափար, որպեսզի ընդունելության քննությունները մի գեղեցիկ օր նույնպես անցնեն ավտոմատացված համակարգերի, և դիմորդներն իրենց ընդունելության քննությունները հանձնեն բացառապես համակարգչի դիմաց՝ օնլայն ռեժիմով, օգտագործելով լավագույն միջազգային փորձը: Մենք նախնական հետազոտություն արել ենք, և համաշխարհային բանկի փորձագետների հետ միասին նման ծրագրի իրականացումը Հայաստանում համարել ենք իրատեսական: Տվել ենք նաև նախնական ֆինանսական գնահատական, որը զգալի գումար է՝ մոտ 12 մլն ամերիկյան դոլարին համարժեք, որպեսզի այդ համակարգը ամբողջությամբ ներդրվի: Կարծում ենք՝ կարելի է մտածել ընդունելության քննությունների բարեփոխումների շրջանակում վերջնականապես անցնել միջազգային լավագույն տարբերակին՝ օնլայն քննություններին և երաշխավորել բացարձակ օբյեկտիվությանը մոտ օբյեկտիվություն: Հիմա բանակցում ենք 2 ուղղությամբ, իհարկե, շատ կարևոր է, որ գումարը լինի, սակայն մինչ գումար գտնելը կարևոր է նաև հասկանալ՝ այդ մեխանիզմը ինչպես է գործելու ամբողջ Հայաստանում՝ մարզերից մինչև մայրաքաղաք, որպեսզի միասնական ավտոմատացված համակարգը աշխատի, նվազեցվեն կիբերհարձակումների կամ հանցագործությունների ռիսկերը, ինչը շատ կարևոր է այս պարագայում: Նմանատիպ միջազգային քննական համակարգերը, օրինակ՝ TOEFL-ը, բավականին երկար ճանապարհ է անցել՝ մինչև վերջնական կատարելագործումը:

տահ եմ՝ ԲՈՒՀ-երը նաև իրարից սովորում են, միմյանց հետ փորձ են փոխանակում: Մեր ԲՈՒՀ-երում տեխնոլոգիական զարգացումները շատ արագ են կատարվում: Կրթության կազմակերպման նորարար ձևերը այսօր և 4 տարի առաջ ուղղակի անհամեմատելի են:

Շատ քիչ ԲՈՒՀ-եր կան անգամ Եվրոպայում, որտեղ արտասահմանցի ուսանողների քանակը ուսանողական համակազմում 20 տոկոսից ավելին է: Բժշկական համալսարանը այդ ԲՈՒՀ-երից մեկն է, որտեղ արտասահմանցի ուսանողների քանակը մոտ է 20 տոկոսին: Եվրամիության անդամ-երկրների ԲՈՒՀ-երում արտասահմանցի ուսանողների քանակը, վերջին տվյալներով, 7 տոկոս է: Ես չեմ ասում, որ մենք եվրոպական ԲՈՒՀ-երից լավն ենք, սակայն բժշկական համալսարանը և մի շարք հայկական ԲՈՒՀ-եր եվրոպական միջին համալսարանների որակի ԲՈՒՀ-եր են: Մենք թոփերի մեջ չենք, բայց հետնապահ էլ չենք, ուղղակի դեռևս վատ է կազմակերպված կրթության մենեջմենթը և PR-ը»:

Ինչպես տեղեկացրեց ԵՊԲՀ ռեկտոր Միքայել Նարինյանը, նորաբաց լսարանը ծառայելու է երկու նպատակի՝ բարելավելու է ուսումնական պրոցեսի որակը և նպաստելու է քննական պրոցեսի արդյունավետությանն ու օբյեկտիվությանը:

«Քանի որ ներկայիս սերունդն ավելի հեշտությամբ է աշխատում համակարգիչներով, մենք համակարգչայնացրել ենք քննական պրոցեսը: Ստեղծվելու են համակարգչային սցենարներ՝ ուսումնական և քննական պրոցեսն ուսանողների համար ավելի հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար», - ասաց Միքայել Նարինյանը:

Նա նաև կարևորեց այն հանգամանքը, որ լսարանում գործող էլեկտրոնային գրադարանը ներառում է միջազգային գրականության հայալեզու բազայի տեղեկատվական 1 մլն միավոր:



ԵՊԲՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ» ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ԹՎՈՒՄ ԵՆ

Օրերս ամփոփվեցին ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից կազմակերպված Հայաստանի Հանրապետության «Լավագույն ուսանող» մրցույթի արդյունքները:

Երևանի պետական բժշկական համալսարանի կողմից մրցույթին ներկայացված երկու ուսանողները՝ Սենիկ Մատինյանը (ընդհանուր բժշկության ֆակուլտետի 4-րդ կուրս) և Ելենա Սարգսյանը (մագիստրատուրայի 2-րդ կուրս), գրավեցին պատվավոր 1-ին տեղը՝ որպես խրախուսանք ստանալով դրամական պարգև: Իսկ մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Անի Երեմյանն արժանացավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Հայրապետական կրթաթղչակի»՝ ուսման վարձի ամբողջական փոխհատուցմամբ:

Նշենք, որ մրցույթն անցկացվել է երկու փուլով. առաջին փուլը ներուհական էր, որն անցկացվեց ԲՈՒՀ-երի հանձնաժողովների կողմից, իսկ երկրորդ փուլը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից: Մրցութային հանձնաժողովի կողմից



զմահատման հիմնական չափանիշեր են հանդիսացել առաջադիմությունը, գիտական աշխատանքները, հասարակական ակտիվությունը, մասնագիտական ձեռքբերումները: Կիրառվել է զմահատման 3-ից 10 միավորանոց սանդղակ: Մրցույթի հաղթողները որոշվել են հավաքած առավելագույն գումարային միավորների քանակով, իսկ ըստ ոլորտների ներկայացված թեկնածուների հավասար միավորների դեպքում հանձնաժողովն առաջնորդվել է մեկ ուսումնական տարվա արդյունքների միջին որակական

զմահատման (ՄՈԳ) առավելագույն արդյունքներով՝ ուսման առաջադիմությամբ: Մրցույթում հաղթող է ճանաչվել 38 ուսանող, այդ թվում՝ 1-ին տեղ՝ 14, 2-րդ տեղ՝ 12 և 3-րդ տեղ՝ 12:

Սիրով շնորհավորում ենք մեր լավագույն ուսանողներին՝ մաղթելով նորանոր հաջողություններ և ձեռքբերումներ:

Նույն հղումները հնչեցին նրանց հասցեին ռեկտորատի միստում, որին հրավիրված էին շնորհալի ուսանողները:

ՄԵՆՔ ԵՐԿՐՈՐԴՆ ԵՆՔ

Ուրախ ենք տեղեկացնել, որ Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված Երևան քաղաքի ամանորյա ձևավորման մրցույթում «Լավագույն ձևավորված ոչ առևտրային կազմակերպություն» անվանակարգում զբաղեցրել է երկրորդ պատվավոր տեղը:

Նշենք, որ առաջին տեղում է ՀՀ Ազգային ժողովը, իսկ լավագույն եռյակը եզրափակում է ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ակադեմիան:





ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՈՐԱԿԻ ՉԱՓԱՆԻՇԵՐ

ԵՄ ՏԵՄՊՈՒՍԻ VERITAS ԾՐԱԳՐԻ հերթական աշխատանքային հանդիպումը տեղի ունեցավ Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանում, որը նվիրված էր Ջալցբուրգյան սկզբունքների համաձայն գիտական աստիճանաշնորհմանն ու որակի չափանիշերին:

Ծրագրի եվրոպական գործընկերները ներկայացրին իրենց համալսարաններում ընդունված դոկտորական կոչման չափանիշերը, որին հաջորդեցին ինտերակտիվ խմբային քննարկումներ Հայաստանում ընդունված գիտական աստիճանաշնորհման չափանիշերի և կրթության երրորդ աստիճանում որակի ապահովմանն ու հզորացման վերաբերյալ:

Մեծ Բրիտանիայի Բաթ Սպա համալսարանի ներկայացուցիչ Թիմ Միդլթոնը ներկայացրեց Մեծ Բրիտանիայում հետազոտական աստիճանի գնահատման չափանիշերը: Նա նշեց, որ դոկտորական կրթու-

թյուն ստացողը պետք է զինված լինի հատուկ հետազոտական և փոխանցելի հմտություններով՝ հետազայում աշխատաշուկայում կիրառելու նպատակով:

Այնուհետև զեկույցով հանդես եկավ Գերմանիայի Հայդելբերգի համալսարանի ներկայացուցիչ Օլիվեր Գրուսը: Նա ներկայացրեց համալսարանի մշակած ռազմավարությունը և ճանապարհային քարտեզը, որը պետք է հանդիսանա այն մի քանի ուղեցույցերից մեկը, որով պետք է առաջնորդվեն ծրագրում ներառված ՀՀ համալսարանները՝ ասպիրանտական պիլոտային ծրագրերի մշակման համար:

Հանդիպման երկրորդ օրը մասնակից ԲՈՒՀ-երը հանդես եկան համառոտ ներկայացումներով: Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի պատվիրակությունը ներկայացրեց համալսարանում երրորդ աստիճանի կրթության որակի ապահովման և

բարելավման հիմնական գրավականները, որոնք են քննադատական լսարանի առկայություն և հետազոտողների ակտիվ մասնակցություն միջազգային սեմինարներին և գիտաժողովներին: Նշված երկու կետերն այնուհետև ընտրվեցին Թիմ Միդլթոնի կողմից ներկայացված ամփոփիչ զեկույցում:

Մասնակիցները քննարկեցին նաև գիտական հետազոտությունների որակի ապահովման գործընթացում ասպիրանտական ծրագրի գիտական ղեկավարի դերի կարևորության առանձնահատկությունների մասին:

ԵՄ ՏԵՄՊՈՒՍԻ VERITAS Ծրագիրը (Ջալցբուրգի սկզբունքների հիման վրա կրթության 3-րդ մակարդակի կառուցվածքային զարգացում) եռամյա ազգային ծրագիր է, որի նպատակն է բարելավել դոկտորական կրթությունը Հայաստանի բարձրագույն կրթական համակարգում՝ եվրոպական որակավորումների շրջանակի և Ջալցբուրգյան սկզբունքների հետ համապատասխանեցնելով:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ՄԵՐ ԱՅՆ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ,
ՈՎՔԵՐ
ԸՆԴԳՐԿՎԱԾ ԵՆ
ԲԺՇԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ՎԻՎԱՍԵԼ-ՄՏՍ»
ՓԱԹԵԹՈՒՄ



Ս/թ փետրվարի 3-ից «Վիվասել-ՄՏՍ» փաթեթում գործում են նոր սակագներ:

Գործող սակագները՝
խմբի ներսում՝ 0 դրամ
դեպի Վիվասել-ՄՏՍ-ի ցանց՝ 8 դրամ
դեպի ՀՀ այլ բջջային ցանց՝ 18 դրամ
դեպի Ղարաբաղ՝ 39 դրամ:

SMS հաղորդագրությունները՝
խմբի ներսում՝ 2 դրամ
դեպի Վիվասել-ՄՏՍ-ի ցանց՝ 5 դրամ
դեպի ՀՀ այլ բջջային ցանց՝ 10 դրամ
միջազգային՝ 20 դրամ:

Ամսավճար՝ 500 դրամ:
Ինտերնետ կապ՝ 1 մ/բժ՝ 30 դրամ:

ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԾՐԱԳՐԵՐ, ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Օրերս հետբուհական և շարունակական կրթության 2013 և 2014 թվականների իրավիճակի համեմատական վերլուծությունը, որը գիտական խորհրդում ներկայացրեց ԵՊԲՀ հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր, պրոֆ. Արմեն Համբարձումյանը, եկավ փաստելու այն հանգամանքը, որ հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետի 15 ամբիոններից՝ անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի, անհետաձգելի սրտաբանության, էնդոկրինոլոգիայի, ընդհանուր և կրծքային վիրաբուժության, մանկաբարձության և զինեկոլոգիայի, մաշկավեներաբանության և կոսմետոլոգիայի, նեոնատոլոգիայի, պլաստիկ վիրաբուժության, սրտաբանության, վնասվածքաբանության և օրթոպեդիայի, ճառագայթային փսիտրոլոգիայի, ընտանեկան և վիրաբուժական ստոմատոլոգիայի, դիմաճոճության վիրաբուժության, թերապիայի ստոմատոլոգիայի և պարոդոնտոլոգիայի, թերապիայի նեղ մասնագիտությունների ամբիոնները անցել են մրցույթով, 3՝ օրթոպեդիկ և օրթոդոնտիկ ստոմատոլոգիայի, կլինիկական փսիտրոլոգիայի և նյարդաբանության ամբիոնները պատրաստվում են մրցույթի, իսկ ինչ վերաբերում է մնացած ամբիոններին՝ դեռ պետք է մտածել, թե ինչպես անցկացնել մրցույթը, քանի որ ժամային առումով նրանց զբաղվածությունը քիչ է և չի համապատասխանում ամբիոնների կարգավիճակին: Ստեղծվել են նաև նոր ամբիոններ և կուրսեր՝ այլընտրանքային բժշկության, հետբուհական կրթության ընդհանուր ստոմատոլոգիական գործունեության և պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման միջառարկայական խումբ:

Ինչ վերաբերում է սովորողների թվին, ապա հարցը ներկայացնող պրոֆ. Ա. Համբարձումյանի զեկույցից պարզ դարձավ, որ 2014 թվականի ընթացքում ֆակուլտետով անցել են 5058 սովորողներ, որոնցից 1728-ը՝ կլինիկական օրդինատորներ, 169-ը՝ ինտերններ, 227-ը՝ մասնագիտացողներ և 2934-ը՝ կատարելագործվողներ: Նրանց մի մասն արդեն ավարտել է, կան նաև հեռացվածներ: Ներկայումս սովորում են 1336 կլինիկական օրդինատորներ, 92 ինտերններ, իսկ մասնագիտացողներն ու կատարելագործվողներն անընդհատ փոխվում են, սակայն՝ տարվա ընթացքում սովորողներ միշտ առկա են լինում: Այսօրվա դրությամբ կան ընդամենը 1428 սովորողներ: Դա համարյա նույն թիվն է կազմում, ինչ 2013 թվականին: Տարբերությունն ընդամենը 112 հոգի է, որը շատ փոքր թիվ է:

ԵՊԲՀ-ի 2014 թվականի շրջանավարտների ընդունելության առնչությամբ հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտորը նշեց. «2014 թվականին ԵՊԲՀ-ն ավարտեց 506 շրջանավարտ, որոնցից 360-ը ընդունվեցին կլինիկական օրդինատուրա, 72-ը՝ ինտերնատուրա, և դա կազմում է հետբուհական կրթության ընդունվածների 85.3%-ը: Արտասահմանցիներից 81 ավարտածից 32-ը մնացին մեր ԲՈՒՀ-ում՝ հետդիպլոմային ուսուցումը շարունակելու համար: Ըստ բացարձակ թվերի և տոկոսների՝ մենք ունենք որոշակի աճ, որը կազմում է 9.5%:

Քանի որ հետբուհական և շարունակական կրթության մենաշնորհը տրված է Երևանի պետական բժշկական համալսարանին, ուստի հարկ է նշել նաև այլ ԲՈՒՀ-երից կատարվող ընդունելության մասին:

Պետական ԲՈՒՀ-երից՝ Երևանի պետական, հայ-ռուսական սլավոնական, Հայաստանի պետական մանկավարժական, Վանաձորի պետական մանկավարժական, Արցախի պետական համալսարաններից և Գիտությունների ազգային ակադեմիայից ընդունվել են 33 հոգի, իսկ ոչ պետական ԲՈՒՀ-երից՝ 161 հոգի:

Պետպատվերի տեղերը լրացվել են գրեթե ամբողջությամբ,

մնացել է ընդամենը 4 թափուր տեղ՝ որոնցից 2-ը կրթության և գիտության նախարարության, իսկ 2-ը ԵՊԲՀ-ի պահուստային տեղերն են:

Ուրախալի է նշել այն փաստը, որ ըստ ներկայացված տվյալների աճել է նաև ԵՊԲՀ շրջանավարտ-օտարերկրացիների ընդունելության թիվը կլինիկական օրդինատուրա:

Մեր հիմնական շուկաները օտարերկրացի կլինիկական օրդինատորների քանակի առումով դարձյալ մնում են Հնդկաստանը՝ 49, Ռուսաստանի Դաշնությունը՝ 36, Վրաստանը՝ 26, Սիրիան՝ 13, Իրանը՝ 12, Իրաքը՝ 3, Լիբանանը և Հորդանանը՝ 2, ԱՄՆ-ն, Ղազախստանը և Շվեդիան՝ 1: Ունենք ընդամենը 146 օտարերկրացի օրդինատոր:

ԵՊԲՀ-ում հետդիպլոմային ուսուցում ստանում են մեր շրջանավարտների 64%-ը, 6%-ը պետական այլ ԲՈՒՀ-երի, 19%-ը ոչ պետական ԲՈՒՀ-երի և 11%-ը օտարերկրացի կլինիկական օրդինատորները: 2014 թվականին՝ 2013-ի համեմատ, ոչ պետական ԲՈՒՀ-երի շրջանավարտների թիվը մեր ԲՈՒՀ-ում նվազել է 11.3%-ով և այժմ կազմում է 19%:

Ինչ վերաբերում է 2014 թվականին ինտերնատուրա ընդունվածների թվաքանակին, ապա պատկերը հետևյալն է. սովորող 92 ինտերններից 21-ը ռազմաբժշկական ֆակուլտետից են՝ ընդհանուր բժշկական գործունեություն զինված ուժերում մասնագիտությամբ, 3-ը ընդհանուր բժշկության ֆակուլտետից, ընդ որում 3-ն էլ օտարերկրացիներ են, 68 ինտերն սովորում է ստոմատոլոգիական ֆակուլտետից, որոնցից 8-ը արտասահմանցի են: Ինտերնների թիվը նույնպես ավելացել է 14 հոգով 2013 թվականի համեմատությամբ:

Բժիշկների և բուժքույրերի մասնագիտացման մասին կարելի է ընդգծել հետևյալը՝ ունեցել ենք 227 մասնագիտացող տարվա ընթացքում, որից 125-ը բժիշկներ են, 102-ը բուժքույրեր: Նրանց մեծ մասը սովորել է վճարովի հիմունքներով: Պետք է ասեն, որ 2014 թվականին մասնագիտացողների թիվը 40 հոգով նվազել է, սակայն հույս ունենք, որ այս տարի նրանց թիվը նորից կաճի:

Բժիշկների և բուժքույրերի կատարելագործման հարցը մեր առաջնահերթ և կարևորագույն խնդիրներից մեկն է:

Կատարելագործվել է 2934 հոգի, որոնցից 1755-ը վճարովի հիմունքներով: Կազմակերպել ենք արտագնա դասընթացներ Վանաձորում, Գյումրիում և Ստեփանակերտում: Ի դեպ՝ Ստեփանակերտում կատարելագործումները կատարվել են պետպատվերի շրջանակներում: Ընդհանուր առմամբ՝ 2014 թվականին կատարելագործվողների թիվը, վերջին 3 տարիների հետ համեմատած, նվազել է և կազմել 2934 հոգի: Դա տեղի է ունեցել ի հաշիվ արտագնա կատարելագործվողների թվի նվազման, որը այս տարի նույնպես պետք է ինտենսիվացվի, և մենք ցանկանում ենք ակտիվորեն աշխատել հեռավոր մարզերի հետ՝ կատարելագործվողների թիվը ավելացնելու նպատակով:

Ուրախալի է այն հանգամանքը, որ ֆակուլտետում ունենք նորություններ:

Կլինիկական օրդինատորների ուսուցումը լիարժեք կազմակերպելու համար պայմանագրեր են կնքվել նորագույն



տեխնոլոգիաներով հագեցված կլինիկաների հետ, որոնք դարձել են համալսարանի բազաներ:

Բացի այդ՝ հաստատված և ներդրված են միջամբիոնական ռոտացիոն ծրագրեր՝ կլինիկական օրդինատորների նույն մասնագիտությամբ տարբեր ամբիոններում սովորողների համար:

ՀՀ Կառավարության որոշմամբ պետական նմուշի ավարտական փաստաթղթի (դիպլոմի) ձևում կատարվել են կարևոր փոփոխություններ:

«Լավ նորություն են համարում նաև այն, որ ԵՊԲՀ-ի ուսանողական խորհրդարանում վերականգնվեց օրդինատորների ակումբը: 2014 թվականի նոյեմբերի 2-ին ԵՊԲՀ-ի օրդինատորների ակումբը հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետի դեկանի գլխավորությամբ, բժշկասոցիալական ծրագրի շրջանակներում այցելեցին Իջևանի «ՍՕՍ» մանկական գյուղ: Ծրագրի նպատակն էր հետազոտել հատուկ կարիքավոր խմբում գտնվող երեխաների առողջական վիճակը: Բազմապրոֆիլ հետազոտությանը մասնակցեցին «ՍՕՍ» մանկական գյուղի 84 երեխաներ: Երեխաների մեծամասնության մոտ առկա էին ստոմատոլոգիական տարբեր բնույթի խնդիրներ: 11 երեխայի մոտ ախտորոշվեցին ուռուլոգիական, 4-ի մոտ՝ ԼՕՌ հիվանդություններ, որոնց զգալի մասը պահանջում է վիրաբուժական միջամտություն: Երեխաների մոտ հայտնաբերվեցին նաև տեսողական, նյարդաբանական, գաստրոէնտերոլոգիական, էնդոկրինոլոգիական, հոգեբուժական, հոգեբանական խնդիրներ: Որոշ երեխաներ լոզոպեդի օգնության կարիք ունեին: Երախտիքի իմ հղումները ԵՊԲՀ ռեկտորին և կլինիկական աշխատանքների գծով պրոռեկտորին, քանի որ նրանց աջակցությամբ մենք արդեն սկսել ենք այս երեխաների անվճար բուժումը համալսարանական կլինիկաներում»:

Մի քանի խոսք կլինիկական օրդինատուրայի և ինտերնատուրայի կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Ըստ կլինիկական օրդինատուրայի կրթական կանոնների՝ համապատասխան հրավերի և հրավիրող կողմի հետ պայմանագրի առկայության և ծրագրերի տվյալ բաժնի համապատասխանության դեպքում կլինիկական օրդինատորն իրավունք ունի առանց ընդհատման (մինչև 6 ամիս) ծրագրի որոշ բաժիններ անցնել արտասահմանյան առողջապահական կազմակերպություններում և կլինիկաներում, որի ավարտից հետո կլինիկական օրդինատորը պետք է ներկայացնի օտարերկրյա առողջապահական կազմակերպությունից կամ կլինիկայից տեղեկանք՝ ուսումնառության մասին: Համալսարանի և այլ կազմակերպությունների միջև համաձայնագրերի և համատեղ ծրագրերի շրջանակներում կլինիկական օրդինատորների ուսումնառությունը կարող է շարունակվել նաև այլ պայմաններով և կարգով:

Կլինիկական օրդինատուրայից բացակայությունների պատճառով հեռացված օրդինատորը վերականգնվում է այն կիսամյակի սկզբում, որից հեռացվել է:

Կլինիկական օրդինատուրայից միջանկյալ ատեստավորման քննությունը չհանձնելու պատճառով հեռացված կլինիկական օրդինատորը վերականգնվում է՝ քննությունը հանձնելու դեպքում հաջորդ կիսամյակում ուսումը շարունակելու, քննությունը չհանձնելու դեպքում՝ այն կիսամյակից, որի քննությունը չի հանձնել:

Ավարտական պետական քննությունը չհանձնած կլինիկական օրդինատորն իրավունք ունի հանձնել քննությունը 6 ամիս անց (առանց կուրսը կրկնելու) կամ 6 ամիս վճարովի հիմունքներով կուրսը կրկնելուց հետո:

Ըստ ինտերնատուրայի կրթական կանոնների՝ համապատասխան հրավերի և հրավիրող կողմի հետ պայմանագրի առկայության և ծրագրերի տվյալ բաժնի համապատասխանության դեպքում ինտերնն իրավունք ունի առանց ընդհատման (մինչև 4 ամիս) ծրագրի որոշ բաժիններ անցնել օտարերկրյա առողջապահական կազմակերպություններում և կլինիկաներում, որի ավարտից հետո ինտերնը պետք է ներկայացնի տվյալ առողջապահական կազմակերպությունից կամ կլինիկայից տեղեկանք՝ ուսումնառության մասին: Համալսարանի և այլ կազմակերպությունների միջև համաձայնագրերի և համատեղ ծրագրերի շրջանակներում ինտերնի ուսումնառությունը կարող է շարունակվել նաև այլ պայմաններով և կարգով:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇԵՑ...

Լսելով և քննարկելով հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Ա.Չ. Համբարձումյանի «Համալսարանի հետբուհական և շարունակական կրթության 2013 և 2014 թվականների իրավիճակի համեմատական վերլուծություն» թեմայով զեկուցումը՝ գիտական խորհուրդը որոշեց.

1. Համալսարանի հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետի աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար:

2. Հանձնարարել հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր Ա.Չ. Համբարձումյանին՝

2.1. ՀՀ առողջապահության բնագավառի մասնագիտությունների և նեղ մասնագիտությունների նոր ցանկի համաձայն կազմել և հաստատել մասնագիտական հետբուհական ուսումնական ծրագրեր,

2.2. միջոցառումներ ձեռնարկել արտագնա կատարելագործման դասընթացները խթանելու ուղղությամբ:

3. Հաստատել օրդինատուրայի (գլուխ 3՝ 11, 17 կետեր) և ինտերնատուրայի (գլուխ 2՝ 11 կետ) կանոնակարգերի կրթական կանոնների փոփոխություններն ու լրացումները:

4. Թույլ տալ օրենքի սահմաններում ավարտական կուրսի կլինիկական օրդինատորներին կատարել վարձատրվող հերթապահություններ պատասխանատու բժշկի հսկողության պայմաններում. վարձատրությունը կատարել համալսարանի բուժաշխատողների համար սահմանված կանոններով:

5. Հետբուհական ուսուցման բարեփոխման նպատակով, որպես պիլոտային ծրագիր, մշակել և ներդնել լրացուցիչ մասնագիտացումների մոդուլային ուսուցման համակարգ:

6. Հանձնարարել պալիատիվ (ամոքիչ) բժշկական օգնության և սպասարկման միջառարկայական կրթական խմբին՝ մշակել և հաստատման ներկայացնել մասնագիտացման կրթական ծրագիր:

7. Համալսարանական բժշկական հաստատություններում անվճար հիմունքներով կամ պետպատվերի շրջանակներում կազմակերպել և աջակցել Իջևանի «ՍՕՍ» մանկական գյուղի մասնագիտացված բժշկական օգնության կարիք ունեցող երեխաների բուժումը:

8. Հաստատել «Ուսանողների գնահատման համակարգում ստուգաբանների և քննությունների անցկացման ու հանձնման կարգի» և «Բակալանվորիատի և մագիստրատուրայի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կազմակերպման և անցկացման կարգի» փոփոխությունները:

9. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր Մ.Չ. Նարինյանին և արդյունքներին անդրադառնալ 2015 թվականի դեկտեմբերին:

ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՍՑԵՆ

Ըստ Իլյա Ուլյանովի անվան Չուվաշիայի պետական համալսարանի ռեկտորի հրավերի՝ ԵՊԲՀ պատվիրակությունը, ի դեմս ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Ս.Ա. Ավետիսյանի և կրթական ծրագրերի բաժնի պետ, դոցենտ Ա.Վ. Բայկովի, 2015-ի փետրվարի 1-8-ը այցելեց Չուվաշիայի պետական համալսարան: Չեքոսլովակիայի քաղաք կատարած գործուղման մասին ռեկտորատին ներկայացված հաշվետվության մեջ պրոֆ. Ս. Ավետիսյանը նշեց, որ այցի նպատակն էր ՉՊՀ-ի, մասնավորապես նրա բժշկական ֆակուլտետի հետ միջբուհական կապերի ամրապնդումը՝ ի պատասխան 2014-ի ապրիլին ՉՊՀ բժշկական ֆակուլտետի դեկանի տեղակալ, պրոֆ. Գ. Յու. Ստրուչկոյի աշխատանքային այցի երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան:

ՉՊՀ այցի շրջանակներում անցկացվեցին հանդիպումներ Չուվաշիայի Հանրապետության փոխվարչա-

պետ, առողջապահության և սոցիալական զարգացման նախարար, պրոֆ. Ա.Վ. Սամոյլովայի, ՉՊՀ ռեկտոր Ա.Յու. Ալեքսանդրովի, ՉՊՀ բժշկական ֆակուլտետի դեկան, պրոֆ. Վ.Ն. Դիոմիդովայի հետ: Ուսումնասիրվեցին Չուվաշիայի բարձրագույն բժշկական կրթության համակարգը, իրականացվող կրթական ծրագրերը, տեսական և կլինիկական ամբիոնները, ուսումնամեթոդական աշխատանքը և գիտական ակտիվությունը: Համադրվեցին «բուժական գործ» մասնագիտության կրթական ծրագրերի ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը, առանձնացվեցին առավել նպատակահարմար դասընթացները՝ մոտ ապագայում ակադեմիական շարժունության իրականացման նպատակով:

Այցի ընթացքում անցկացվեցին հանդիպումներ քաղաքային, հանրապետական և տարածաշրջանային նշանակության առողջապահական հաստատություններում՝ կլինիկական բազաների ղեկավարների և հա-

մապատասխան կլինիկական ամբիոնների վարիչների ու դրանց պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ: Ուսումնասիրվեցին կլինիկական առարկաների դասավանդման պայմանները, մեթոդաբանությունը, բուժական և գիտական աշխատանքը: Առանձին ուշադրություն դարձվեց ՉՊՀ-ի հանրակացարանային ֆունդին և եմբակառուցվածքային այլ միավորներին:

Աշխատանքային հանդիպումներն անցան փոխըմբռնման ջերմ մթնոլորտում: Հանդիպումների արդյունքում 2015-ի փետրվարի 6-ին ՉՊՀ ռեկտոր Ա.Յու. Ալեքսանդրովի, վարչակազմի և մի շարք ամբիոնների վարիչների մասնակցությամբ ամփոփիչ «Կլոր սեղանի» ընթացքում հստակեցվեցին համագործակցության ձևերը, ակադեմիական շարժունության հիմնական ուղղությունները և ժամկետները, ինչի վերաբերյալ ստորագրվեց համապատասխան «Ուեզլուցիա»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ IV ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

2015-ի հուլիսի 2-4-ը երևանում կանցկացվի Հայաստանի IV միջազգային բժշկական համագումարը: Համագումարն ուղղված է զարգացնելու համայն աշխարհով սփռված բժիշկների համագործակցությունը, քննարկելու բժշկության, առողջապահության և բժշկական կրթության արդի խնդիրներն ու ծրագրերը, ներկայացնելու ու փոխանակելու բժշկագիտական նվաճումները:

ԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ Է ԱՌԱՋԱՐԿՈՒՄ «ԱՐԵՆԱ» ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԼՍԱՐԱՆԸ

Լսարանից կարող են օգտվել ԵՊԲՀ աշխատակիցները և ուսանողները՝ ստուգվելուց և գրանցվելուց հետո:

Լսարանում ապահովվում են՝ համակարգչի (սեփական կամ համալսարանական) և ինտերնետի (այդ թվում WiFi-ի միջոցով) օգտվելու հնարավորություններ, նյութերի տպագրում, նյութերի սկանավորում, համալսարանի կողմից անդամագրված համացանցի ուսումնական (eGranary) և բժշկական (UpToDate) ծառայությունների հասանելիություն, համալսարանի ամբիոնների կողմից տրամադրված ուսումնական և այլ նյութերից օգտվելու հնարավորություն:

Համակարգչային լսարանի աշխատանքային ժամերն են՝ 9:00-15:00-ը:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական բժշկական համալսարանի ռեկտորի նախաձեռնությամբ «Հերացի» հիվանդանոցային համալիրի պոլիկլինիկայում ԵՊԲՀ պրոֆեսորների կողմից իրականացվում են անվճար բժշկական խորհրդատվություններ:

Խորհրդատվությունները կատարվում են ցանկացած բնակչի համար՝ անկախ տարիքից, սեռից և սպասարկման տարածքից, նախնական գրանցումով, յուրաքանչյուր շաբաթօր, ժամը 10.00-12.00-ը:

Խորհրդատվություններն իրականացվում են հետևյալ մասնագիտություններով՝

Թոքաբանություն՝ Միքայել Զախարի Նարիմանյան, ԵՊԲՀ ռեկտոր, բ.գ.դ., պրոֆեսոր:

Քիմիոկորդ-ականջի հիվանդություններ՝ Արթուր Կիմի Շուքուրյան, LON հիվանդությունների ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր:

Վիրաբուժական հիվանդություններ՝ Մուշեղ Միսակի Միրիջանյան, վիրաբուժության թիվ 4 ամբիոնի վարիչ, «Հերացի» թիվ 1 համալսարանական հիվանդանոցի վիրաբուժական կլինիկայի ղեկավար, բ.գ.դ., պրոֆեսոր:

Կոլոպրոկտոլոգիա՝ Արմեն Միքայելի Մինասյան, կոլոպրոկտոլոգիայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.դ., պրոֆեսոր:

Մանկաբուժություն՝ Նունե Գևորգի Բաղդասարյան, մանկաբուժության թիվ 1 ամբիոնի վարիչ, «Մուրացան» հիվանդանոցային համալիրի մանկաբուժության կլինիկայի ղեկավար, բ.գ.դ., դոցենտ:

Մաշկաբանություն և սեռավարակաբանություն՝ Կարեն Ռշտունու Բաբայան, մաշկաբանության և սեռավարակաբանության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր:

Նյարդաբանություն՝ Զովհաննես Մորիսի Մանվելյան, նյարդաբանության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր:

Նյարդավիրաբուժություն՝ Ռուբեն Վիկտորի Ֆանարջյան, նյարդավիրաբուժության ամբիոնի վարիչ, «Հերացի» թիվ 1 համալսարանական հիվանդանոցի նյարդավիրաբուժության կլինիկայի ղեկավար, բ.գ.դ., պրոֆեսոր:

բաբուժության կլինիկայի ղեկավար, բ.գ.դ., պրոֆեսոր:

Սրտաբանություն՝ Զնայակ Սոսի Միսակյան, անհետաձգելի սրտաբանության ամբիոնի վարիչ, «Հերացի» թիվ 1 համալսարանական հիվանդանոցի սրտաբանության կլինիկայի ղեկավար, բ.գ.դ., պրոֆեսոր:

Էնդոկրինոլոգիա՝ Էդվարդ Նորայրի Թորոմանյան, էնդոկրինոլոգիայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԱՆ գլխավոր մասնագետ, բ.գ.թ., դոցենտ:

Ակնաբուժություն՝ Արմեն Աբրահամի Շաքարյան, մանկական ակնաբուժության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, «Հերացի» համալսարանական հիվանդանոցի ակնաբուժական կլինիկայի ղեկավար, ՀՀ ԱՆ գլխավոր մասնագետ, բ.գ.դ., պրոֆեսոր:

Մանրամասների համար զանգահարել (010) 58 07 24 հեռախոսահամարով:

Հասցե՝ ՀՀ, Երևան, Արմվյան 60, «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիր, «Հերացի» պոլիկլինիկա Էլ. hasugt@heratsipolyc@yahoo.com

ԱԿՑԻԱ «ՄՈՒՐԱՑԱՆ» ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Սիրելի կանայք և աղջիկներ, տեղեկացնում ենք ձեզ, որ ս/թ փետրվարի 15-ից ապրիլի 15-ը Երևանի պետական բժշկական համալսարանի «Մուրացան» հիվանդանոցային համալիրում կանխարգելիչ և կրծքագեղձի հիվանդությունների վաղաժամ հայտնաբերման նպատակներով հայտարարվում է ակցիա կրծքագեղձի հետազոտությունների համար (մամոգրաֆիա, սոնոգրաֆիա)՝ գործող գնացուցակի 50%-ի չափով:

Բոլոր կանայք և աղջիկները, 35 տարեկանից բարձր, կարող են դիմել ԵՊԲՀ «Մուրացան» հիվանդանոցային համալիրի Ախտորոշիչ կենտրոն:

Դիմել՝ երկուշաբթի-ուրբաթ, ժամը 10:00-14:00:
Հասցե՝ ք.Երևան, Մուրացան 114
Հեռախոս՝ 060 62 15 94

ԱԿՑԻԱ ԵՊԲՀ ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅՈՒՄ

Երևանի պետական բժշկական համալսարանի ակնաբուժական կլինիկայում ս/թ փետրվարի 15-ից մինչև մարտի 15-ն իրականացվում է տարիքային կատարակտով հիվանդների վիրահատական բուժում ժամանակակից ուլտրաձայնային եղանակով՝ գործող գնացուցակի 50%-ի չափով:

Հերթագրվելու համար կարող եք զանգահարել (060) 62 13 96, (055) 05 86 95 (շուրջօրյա) հեռախոսահամարներով կամ այցելել Արմվյան 60/1 հասցեով:

«ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ» ԹԵՐԹԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ» հրատարակվում է «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն: Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների իրացումից հասույթը (համախառն եկամուտը)՝ ընդամենը 0 դրամ: Այդ թվում՝ ա) եկամուտ ամսագրի բաժանորդագրությունից, բ) ամսագրի հատվածառից, գ) գովազդից՝ 0 դրամ: Նվիրատվության մասնաբաժնի չափը՝ 0 դրամ: Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների իրացումից շահույթը՝ 0 դրամ:

ՄԱՐՏԻ 1-Ը ՔԱՂՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

Քաղաքապետությունն անգն քաղաքացիների պաշտպանությունն է պատերազմական գործողությունների, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների ժամանակ: Ըստ պատերազմի ժամանակ քաղաքացիական անձանց պաշտպանության վերաբերյալ ժնկյան IV կոնվենցիայի՝ քաղաքացիական բնակչությունն ամբողջությամբ չի կարող հանդիսանալ հարձակման օբյեկտ: Սակայն պատերազմների պատմությունը ցույց է տալիս, որ մարտական գործողությունների անմիջական մասնակիցներից ոչ պակաս կորուստներ է կրում խաղաղ բնակչությունը: Ելնելով դրանից՝ պետությունները ստեղծում են հատուկ համակարգեր, որոնք կոչված են քաղաքացիների պաշտպանությանը՝ զինված հարձակման դեպքում: Մեր հանրապետությունում քաղաքացիական պաշտպանության մասին օրենքը ընդունվել է 2002-ի մարտի 5-ին: Այն սահմանում է այդ պաշտպանության սկզբունքները, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների իրավունքներն ու պարտականություններն այդ ուղղությամբ:

Ըստ նշված օրենքի՝ քաղաքացիական պաշտպանության ձևերն են՝ տարհանումը, պատսպարումը և անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը: Օրենքը սահմանում է նաև, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պարտավոր են մասնակցել պաշտպանության միջոցառումների իրականացմանը: Իսկ քաղաքացիական պաշտպանության նախապատրաստական և հիմնական միջոցառումներն անմիջականորեն օգտագործելու համար ստեղծված է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն՝ մարզային, համայնքային և օբյեկտային ստորաբաժանումներով:

Համալսարանում մենք ևս ունենք մեր կառույցը արտակարգ իրավիճակների և քաղաքապետության գծով, որը կոչված է իրականացնելու անհրաժեշտ անվտանգության միջոցառումներ: Ուսանողության շրջանում այդ միջոցառումներն իրականացվում են արտակարգ իրավիճակների բժշկության և քաղաքապետության հիմունքների դասավանդմամբ, իսկ բոլոր ամբիոններին և վարչատնտեսական ստորաբաժանումներին տրված են համապատասխան ծրագրեր և մատյաններ:

Մենք պետք է զգոն լինենք և լուրջ մոտենանք յուրաքանչյուրիս անձի պաշտպանությանը, լինենք անկեղծ՝ բոլո՞րս, արդյոք, գիտենք, թե ինչպես վարվել քաղաքապետության այս կամ այն ազդանշանի ժամանակ, բոլո՞րս, արդյոք, կարող ենք հակազգալ ճիշտ հազնել կամ ցույց տալ առաջին բուժօգնություն՝ այս կամ այն զենքի կիրառման դեպքում: Երևի՞ ոչ բոլորս:

Այս առիթով էլ իմ գրույցը ԵՊԲՀ իրավաբանական բաժնի պետ Մելիք Սողոմոնյանի և ԵՊԲՀ արտակարգ իրավիճակների շտաբի պետ, պահեստի գնդապետ Սամվել Գրիգորյանի հետ:

Համալսարանի կառուցվածքային փոփոխությունների արդյունքում արտակարգ իրավիճակների շտաբը ներկայումս գործում է որպես իրավաբանական բաժնին կից կառույց

Երևանի պետական բժշկական համալսարանի արտակարգ իրավիճակների ընթացքը հաշվի առնելով՝ ղեկավարությունը որոշել է վերազինել և նոր հայեցակարգով իրականացնել համալսարանի արտակարգ իրավիճակների հետ կապված բոլոր գործընթացները:

Վերազինման նպատակով համալսարանի ղեկավարությունը վերանայում է եղած գույքը՝ նպատակ ունենալով ձեռք բերել ժամանակի ոգուն համապատասխան նոր պարագաներ և սարքավորումներ:

Ինչ վերաբերում է բժշկական համալսարանի իրավական ակտերին՝ վերանայում ենք իրավական դաշտը, որպեսզի անհրաժեշտության դեպքում կարողանանք ճիշտ կազմակերպել արտակարգ իրավիճակները:

Եթե նախկինում մենք ունեինք հանձնաժողովներ, որոնց անդամները հաճախ այդ մասին չգիտեին, ներկայումս մենք և՛ հանձնաժողովի անդամներին ենք իրազեկում իրենց պարտականությունների մասին, և՛ կազմակերպում ենք դասընթացներ:

Դասընթացների հետ կապված համագործակցում ենք ռազմաբժշկական ֆակուլտետի աղետների բժշկության ամբիոնի հետ:

Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ արտակարգ իրավիճակների շտաբը ներկայումս գործում է իրավաբանական բաժնին կից, որպեսզի լինի իրավական հսկողություն այդ գործընթացի նկատմամբ:

Մենք վերանայում ենք եղած գույքը, և՛ հակահրդեհային, և՛ ահազանգման սարքավորումները, որպեսզի գնենք նորը կամ վերանորոգենք եղածը՝ մեր հնարավորությունների սահմաններում: Դա կրելու

կան համալսարանի իրավական ակտերին՝ վերանայում ենք իրավական դաշտը, որպեսզի անհրաժեշտության դեպքում կարողանանք ճիշտ կազմակերպել արտակարգ իրավիճակները:

Եթե նախկինում մենք ունեինք հանձնաժողովներ, որոնց անդամները հաճախ այդ մասին չգիտեին, ներկայումս մենք և՛ հանձնաժողովի անդամներին ենք իրազեկում իրենց պարտականությունների մասին, և՛ կազմակերպում ենք դասընթացներ:

Դասընթացների հետ կապված համագործակցում ենք ռազմաբժշկական ֆակուլտետի աղետների բժշկության ամբիոնի հետ:

Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ արտակարգ իրավիճակների շտաբը ներկայումս գործում է իրավաբանական բաժնին կից, որպեսզի լինի իրավական հսկողություն այդ գործընթացի նկատմամբ:

Մենք վերանայում ենք եղած գույքը, և՛ հակահրդեհային, և՛ ահազանգման սարքավորումները, որպեսզի գնենք նորը կամ վերանորոգենք եղածը՝ մեր հնարավորությունների սահմաններում: Դա կրելու

կան համալսարանի իրավական ակտերին՝ վերանայում ենք իրավական դաշտը, որպեսզի անհրաժեշտության դեպքում կարողանանք ճիշտ կազմակերպել արտակարգ իրավիճակները:

Եթե նախկինում մենք ունեինք հանձնաժողովներ, որոնց անդամները հաճախ այդ մասին չգիտեին, ներկայումս մենք և՛ հանձնաժողովի անդամներին ենք իրազեկում իրենց պարտականությունների մասին, և՛ կազմակերպում ենք դասընթացներ:

Դասընթացների հետ կապված համագործակցում ենք ռազմաբժշկական ֆակուլտետի աղետների բժշկության ամբիոնի հետ:

Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ արտակարգ իրավիճակների շտաբը ներկայումս գործում է իրավաբանական բաժնին կից, որպեսզի լինի իրավական հսկողություն այդ գործընթացի նկատմամբ:

Մենք վերանայում ենք եղած գույքը, և՛ հակահրդեհային, և՛ ահազանգման սարքավորումները, որպեսզի գնենք նորը կամ վերանորոգենք եղածը՝ մեր հնարավորությունների սահմաններում: Դա կրելու



Է պարբերական բնույթ, և հեռու չէ այն օրը, երբ բժշկական համալսարանը լիովին վերազինված կլինի անհրաժեշտ բոլոր սարքավորումներով:

ՄԵԼԻՔ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է



- ՊՐՆ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՆԵՐԿԱՅԱԳՐԵՔ, ԽՆՈՒՆԵՆ, շՏԱՔԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ:

- Ֆունկցիաներից ամենաառաջինը արտակարգ իրավիճակների դեպոյում քաղաքաշտպանության կազմակերպումն է: ԵՊԲԳ-ում ստեղծված են քաղաքացիական պաշտպանության ծառայություններ: Այդ կազմը 2 տարին մեկ թարմացվում է: Ունենք տարիանման հանձնաժողով, որի նախագահը ԵՊԲԳ-ի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորն է: Տարիանման հանձնաժողովն ունի կոնկրետ պլան, որը գործի է դրվում արտակարգ իրավիճակների ժամանակ: Յուրաքանչյուր տարի այն թարմացվում է: Օրինակ՝ երկրաշարժի կամ այլ արտակարգ իրավիճակի դեպքում, երբ անհրաժեշտ է տարիանել անձնակազմին, քաղաքացիական պաշտպանության շտաբը հավաքվում է համալսարանի ապաստարանում և այնտեղից ղեկավարում է քաղաքաշտպանության ծառայությունների աշխատանքը: Առաջին հերթին գործողության մեջ է դրվում տարիանման հանձնաժողովի պլանը:

Ի դեպ՝ ապաստարանն ապահովված է քաղաքային հեռախոսահամարներով, ջրի, էլեկտրաէներգիայի, օդափոխման ինքնուրույն համակարգերով: Արտակարգ իրավիճակների ժամանակ առաջին հերթին տարիանում ենք ուսանողներին, այնուհետև՝ անձնակազմին:

- ԻՍԿ տարիանման համար տրանսպորտային միջոցներ օգտագործվում են:

- Ոչ, քաղաքային պլանի համաձայն՝ մարդկանց ուղարկելու տեղափոխում ենք Պուլչիկի անվան դպրոց: Այնուհետև դպրոցում տեղակայված «Կենտրոն» վարչական շրջանի ղեկավարը գործողության մեջ է դնում պլանը, և մարդկանց տեղափոխում են անվտանգ վայր: Արտակարգ իրավիճակների տեսակի հետ կապված՝ գործողության մեջ են դրվում համապատասխան այլ ծառայություններ: Օրինակ՝ եթե տեղի է ունենում վթար ատոմակայանում, մենք ունենք 2.000քմ նկուղային տարածք մեր համալսարանում և շուրջ 1.500քմ նկուղային տարածքներ «Չերացի» թիվ 1 և «Մուրացան» համալսարանական հիվանդանոցներում, որտեղ պատսպարում ենք մարդկանց: Ունենք նաև 150 տեղանոց

ապաստարան, որը կառուցվել է 1960-ական թվականներին՝ որպես Երևան քաղաքի ներկայիս «Կենտրոն» համայնքի ղեկավարման կենտրոն: Անցյալ տարի կրթության և գիտության նախարարությունն էլ վերցրեց այն՝ որպես իր ղեկավարման կենտրոն: Այսինքն՝ ապաստարանը, որպես ղեկավարման կենտրոն, ծառայում է ԿԳ նախարարությանը, «Կենտրոն» համայնքին և բժշկական համալսարանին: Եթե մասշտաբային արտակարգ իրավիճակ պատահի, նրանք կարող են գալ այստեղ և ղեկավարել քաղաքացիական պաշտպանության ծառայությունների գործողությունները: Ունենք 40 տեղանոց դասասենյակ, որտեղ անցկացվում են պարապմունքներ բժշկական համալսարանի աշխատակիցների, ռազմաբժշկական ամբիոնի ուսանողների, վերապատրաստման եկած բուժքույրերի և բժիշկների հետ: Նրանց ծանոթացնում ենք ապաստարանի կառուցվածքին, խոսում ենք այն մասին, թե ինչ նպատակ է այն հետապնդում, ցույց ենք տալիս վթարային էլքը, որը դուրս է գալիս ամատոմիկում, եթե ֆիզկուլտուրայի ամբիոնի կողմից վթարային էլքը փլուզվի: Ունենք հակազգաբեր, սանիտարական պատգարակներ և պայուսակներ:

- Ի՞նչ կասեք հակահրդեհային ծառայության մասին:

- Համալսարանի, հիվանդանոցային համալիրների, ուսանողական հանրակացարանի և «Չերացի» ավագ դպրոցի մասնաշենքերի բոլոր հարկերում տեղադրված են հակահրդեհային ծորակներ՝ փողրակներով: Ունենք նաև մոտ 100 կրակմարիչներ, որոնք դրված են տարբեր հարկերում: Մենք անձնակազմի հետ անցկացնում ենք պարապմունքներ և ցույց ենք տալիս հակահրդեհային միջոցների օգտագործման ձևերը: Այդ կրակմարիչները ժամանակի ընթացքում անհրաժեշտ է լինում վերալիցքավորել, որը կատարում ենք յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ:

- Էլ ի՞նչ պարտականություններ ունեք:

- Այդ ամենից բացի՝ մեր պարտականությունների մեջ են մտնում նաև անձնակազմի հետ անցկացվող պարապմունքները: Ունենք մշակված թեմաներ, որոնց հետ ծանոթացնում ենք անձնակազմին: Առաջին բուժօգնության կազ-



մակերպման հարցում համագործակցում ենք համալսարանի աղետների բժշկության ամբիոնի ղեկավարության՝ հատկապես բժիշկ Սպարտակ Հովհաննիսյանի հետ: Մեր նպատակն է մարդկանց տեղեկացնել, որ արտակարգ իրավիճակների ժամանակ ծառայությունների միջև փոխհամաձայնությունը շատ կարևոր է: Բացի այդ պարապմունքներից՝ համագործակցում ենք փրկարար ծառայության «Կենտրոն» համայնքի ղեկավարության հետ: Կարևորն այն է, որ այդ ծառայություններն իրականացնող ղեկավարներն ունեն իրենց մշակած ծրագրերը, և անհրաժեշտության դեպքում նրանք հստակ գիտեն իրենց անելիքը:

- Այս ամենից բացի էլ ինչի՞ մասին կցանկանայիք տեղեկացնել մեր ընթերցողներին:

- Առաջին հերթին կցանկանայի խորհուրդ տալ հատկապես ուսանողներին, որ համալսարանի տարածքում՝ մասնաշենքերում, լսարաններում, չծխեն՝ հրդեհային վտանգներից խուսափելու համար: Բացի դրանից՝ կոչ են անում բոլորին պահպանել հակահրդեհային նորմերը՝ աշխատանքից հետո անջատել լույսերը, էլեկտրական սալիկները, ջուրը փակել...

- Ընորհակալություն հարցազրույցի համար: Տա Աստված, որ արտակարգ դեպքեր մեզ մոտ չլինեն, և այդ ամենի կարիքը մենք չունենաք:

Հարցազրույցը՝ ԱԻՊԱ ՀԱԿՈՒՅԱՆԻ



ՄԻ՞ԹԵ 1.5 ՄԻԼԻՈՆ Է ԶՈՅԵՐԻ ԹԻՎԸ

Ընդամենը մի քանի օրից ազգովի կնշենք մեր ժողովրդի պատմության ամենասև ու դժնի իրադարձության մեկդարյա տարելիցը:

Ասել, թե հայ ժողովրդի վերացման իրենց տխրահռչակ ծրագիրը միայն 1915-ին իրականացրին թուրքերը, սխալ կլինի: Քանի որ հայկական կոտորածները շատ ավելի վաղ ժամանակագրություն ունեն. դրանք 1915-ով չեն սկսվել և 1915-ով չեն ավարտվել: Սակայն իրենց ծրագրի գագաթնակետը թուրքերը դարձրին 1915-ը՝ օգտվելով այն հանգամանքից, որ աշխարհը «զբաղված էր» առաջին համաշխարհային պատերազմով և, կոպիտ ասած, շունը տիրոջը չէր ճանաչում: Աշխարհի գերտերություններն ունեին իրենց շահերը, որոնց արդյունքում բախումները հնարավորություն էին տալիս «չտեսնել» Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող սպանող, տեղահանությունների անվան տակ իրականացվող եղեռնը...

Առաջադեմ մարդկության շատ ներկայացուցիչներ՝ հայ ժողովրդի մեծագույն բարեկամներ, մտավորականներ, թեև բարձրացնում էին իրենց ձայնը, ահազանգում այն մասին, թե ինչ է կատարվում Հայաստանի այդ մասում, միևնույն է՝ գերտերությունները և նրանց կառավարու-

թյունները տարված էին, իրենց կարծիքով, առավել կարևոր հարցերով, քան հայ ժողովրդի ճակատագիրն էր:

Գաղտնիք չէ, որ հենց այս դեպքերին չարձագանքելու հետևանքով աշխարհը երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ականատեսը դարձավ նոր եղեռնի՝ նրա կազմակերպչի բնութագրումով. «Հիմա ո՞վ է հիշում հայերի կոտորածը...» Հիտլերի՝ ասույթի վերածված կարգախոսով:

Այնպես որ՝ ժամանակին համարժեք գնահատականի չարժանացած յուրաքանչյուր իրադարձություն հետհարվածով իջնում է այն անտեսողների գլխին...

1915-ը նշվում է որպես 1.5 միլիոն հայերի կոտորածի տխուր տարելից: Միլիոն ու կե՞ս...

Միլիոն ու կեսի առնվազն կեսը՝ եթե ոչ ավելին, հետագայում պետք է սերունդ տար, զավակներ ունենար՝ եթե ողջ մնար:

Ուրեմն հարյուրամյա տարելիցը միայն զոհերի հիշատակման առիթ չէ, այն ընդգծում է նաև այն զոհերի թիվը, ովքեր այդպես էլ չծնվեցին:

Ս. ԹՈՐՈՍՅԱՆ




ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆ Է ԸՆՏՐՎԵԼ ԱՆՄՈՌՈՒԿԸ ԻՆՉ Է ԱՅՆ ԽՈՐՀՐԴԱՆՇՈՒՄ




Հինգ պսակաթերթիկները խորհրդանշում են այն 5 մայր-ցամաքները, որտեղ ապրում են Հայոց ցեղասպանությունից փրկված հայերը: Ծաղկի 4 հիմնական գույներն են՝ մանուշակագույնը, բաց մանուշակագույնը, դեղինը և սևը:




ՍԵՎԸ խորհրդանշում է Եղեռնի սարսափները՝ ԱՆՑՅԱԼԸ:



ԲԱՑ ՄԱՆՈՒՇԱԿԱԳՈՒՅՆԸ խորհրդանշում է գաղափարին համամասնակից լինելը՝ ՆԵՐԿԱՆ:



ՄԱՆՈՒՇԱԿԱԳՈՒՅՆԸ խորհրդանշում է հայկական ինքնագիտակցության հիմք հանդիսացող Հայոց եկեղեցու սպասավորների հանդերձանքը՝ ԱՊԱԳԱՆ:



ԴԵՂԻՆԸ՝ խորհրդանշում է հույս պարզևող արևի լույսը և շրջանաձև դասավորված 12 մույթերի տեսքով Ծիծեռնակաբերդը՝ ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆԸ:

ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Հեղինակը գիրքը նվիրում է Հայոց Մեծ Եղեռնի ընթացքում հայ բժիշկների նահատակության 100-ամյա տարելիցին

Գրքում այբբենական կարգով ներկայացված են հիմնականում 19-20-րդ դարերի Օսմանյան կայսրությունում, Թուրքիայի Հանրապետությունում և հարակից տարածքներում ազգային պատկանելության սկզբունքով բռնաճնշումների և ցեղասպանության ենթարկված հայ բժիշկների և բուժաշխատողների համառոտ կենսագրականները:

Նվիրված լինելով բժշկության ոլորտի աշխատողների կյանքին ու գործունեությանը՝ այն հարուստ փաստագրական նյութ է պարունակում Թուրքիայում դարեր շարունակ իրականացված հայասպան քաղաքականության մասին:

Գիրքն իրենից ներկայացնում է նաև կենսագրական տեղեկատու՝ Թուրքիայում երբևէ ապրած և աշխատած շուրջ 500 հայ բժիշկների և բուժաշխատողների մասին:

Հավելվածների ձևով ներկայացված են հայ և օտար գործիչների թեմատիկ հուշերը Մեծ Եղեռնի մասին:

Գրքում «բժիշկ» հասկացության տակ ընդգրկված են անենատարբեր մասնագիտության բժիշկները, ատանմաբույժները, բուժակները, դեղագործները, անասնաբույժները, բժշկական ուսումնական հաստատությունների ուսանողները, անգամ՝ ժողովրդական բժիշկները:

Ընդգրկված են 19-20-րդ դարերում Օսմանյան կայսրության տարածքում (Արևմտյան Հայաստան, Անատոլիա, Կոստանդնուպոլիս (այսուհետ՝ Կ. Պոլիս), արաբական Արևելք և այլն) և գաղութներում ազգային պատկանելության սկզբունքով, հասարակական կամ քաղաքական հայացքների համար բռնաճնշումների (հետապնդում, ձերբակալություն, բանտարկություն, արտաքսում, արքայազատ, ազատագրված վայրում մահ, խոշտանգում, մահապատիժ) ու ցեղասպանության ենթարկված, Առաջին աշխարհամարտի ընթացքում ռազմաճակատի վտանգավոր հատվածները դիտավորյալ ուղարկվելու հետևանքով զոհված, սուր վարակիչ հիվանդությունների օջախներում աշխատանքի պարտադրվելու հետևանքով վտանգ


գավոր ինֆեկցիաներով վարակված ու մահացած, քաղաքացիական կամ զինվորական հիվանդանոցներում աշխատելու ընթացքում հիվանդացած և դիտավորյալ առանց բուժման ու խնամքի թողնելու հետևանքով մահացած, թուրք բժիշկների բժշկական փորձարկումներից ենթարկվելու հետևանքով մահացած հայ բժիշկների ու բուժաշխատողների համառոտ կենսագրականները:

Գրքում ընդգրկված են նաև 20-րդ դարասկզբին Արևելյան Հայաստանում ու հարակից տարածքներում (Բաքու, Գանձակ, Նախիջևան, Շուշի) մահմեդական տարրերի հետ կռիվների ու բախումների հետևանքով զոհված հայ բուժաշխատողների համառոտ կենսագրականները:

Գրքում չեն ընդգրկվել այն հարյուրավոր հայ բժիշկները, ովքեր պատերազմի, տեղահանության ու ցեղասպանության պատճառով կորցրել են իրենց ընտանիքի անդամներին ու հարազատներին, պապենական կալվածքներն ու տները, ինչքն ու հարստությունը և, մագապուրծ փախչելով, ապաստան գտել հարևան երկրներում՝ հետագայում աշխարհով մեկ սփռվելու և այսօրվա տխուր իրողությունը հանդիսացող Սփյուռքը ձևավորելու համար: Նրանց մեծ մասը՝ կսկիծը սրտում, իրենց վախճանը գտան օտար ափերում կամ ձուլվելով տեղաբնակների հետ՝ վերացան որպես հայ:

Աղբյուրներում երբեմն հանդիպող հակասական տվյալների (վայր, թվական) պարագաներում, երբ ինձ համար անհնար է եղել պարզել ճիշտ տվյալը, ներկայացրել եմ բոլոր տարբերակները՝ դրանք իրարից բաժանելով թեք գծով (/):

Հեռու եմ այն մտքից, թե կարողացել եմ կամ ի վիճակի կլինեի հավաքել Օսմանյան կայսրությունում, Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում բռնաճնշումների ու ցեղասպանության ենթարկված բժիշկների լիակատար անվանացանկը: Կարծում եմ, որ երբեք էլ հնարավոր չի լինի հաշվել այն անհամար կորուստները, որ եղան



Հարություն Մինասյան

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԹՈՒՐԵԿԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՈՒՆԱԾՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐ

1915 թվականի Մեծ Եղեռնի, ինչպես նաև դրանից առաջ և հետո իրականացված հայերի անթիվ ու անհամար կոտորածների ընթացքում:

Անհրաժեշտ անունը գտնելը հեշտացնելու նպատակով առաջնորդվել եմ հանրագիտարանային սկզբունքով և ազգանունները դասավորել այբբենական կարգով՝ արևելահայերենում ընդունված ձևով: Ազգանունները անհայտ լինելու դեպքում նշել եմ միայն անունը: Օգտագործել եմ տեղանունների հայերեն տարբերակները՝ առաջին հիշատակման դեպքում, կողքին փակագծերում նշելով տվյալ տեղանվան օտար (հիմնականում՝ թուրքերեն) տարբերակը:


Բժիշկների մասին հիշատակությունների աղբյուրների ցանկը բերված է յուրաքանչյուր կենսագրության ավարտին՝ աղբյուրների հրատարակության տարեթվերի ժամանակագրական հաջորդականությամբ:

ԻՆՉՊԵՍ ԱՆՎՃԱՐ ՍՏԱՆԱԼ ԱՅՍ ԳԻՐՔԸ

Անհրաժեշտ է ձեր կազմակերպության բլանկի վրա, կնիքով և ստորագրությամբ դիմում ներկայացնել մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանին՝ խնդրելով հատկացնել այդ գրքից 1-5 օրինակ:
Նախարարը դիմումը կմակագրի «Բիբլիոլեկտորի» տնօրենին, որից էլ անվճար կստանաք գրքերը:
Գիրքը տպագրվել է պետպատվերով և վաճառքում չի լինելու:

Հեղինակ՝
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԻՆԱՍՅԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԲՈԼՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԶԱՆԳԵՐԸ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ԿՈԳԵԿՈՉԵՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՅԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ



Գերմանիայի միջեկեղեցական խորհրդի տարեկան նիստում պաշտոնական հայտարարություն է ընդունվել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ, որում նշվում է, որ թեև անցել է մեկ հարյուրամյակ, սակայն կատարվածն իր ծանր ազդեցությունն է գործում ոչ միայն հայ ժողովրդի, այլև միջազգային համրության վրա:

«2015-ին մենք ոգեկոչում ենք Օսմանյան կայսրության կողմից իրագործած Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցը: 1915-22 թվականներին մեկ ու կես միլիոն հայեր սպանվեցին, իսկ հազարներ էլ տեղահանվեցին իրենց տներից և արքայապետներին: Այսօր աշխարհով մեկ սփռված ավելի քան վեց միլիոնանոց հայկական Սփյուռքն այդ ցեղասպանության տեսանելի հետևանքն է:

Անգամ, եթե այսօր գրեթե վերապրողներ չկան՝ ցավի և անարդարության ճանաչումը շարունակում է մնալ արդիական:

Մենք հարգում ենք հայ, ինչպես նաև շուրջ 600.000 արամեացի, ասորի և հույն քրիստոնյաների՝ ներառյալ կաթոլիկների ու բողոքականների հիշատակը, ովքեր սպանվեցին իրենց հայ եղբայրների և քույրերի հետ միասին: Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ջանքերը՝ հայ եկեղեցիներին հնարավորություն ընձեռել իրենց ձայնը բարձրացնելու և պայքարելու

20-րդ դարի առաջին Ցեղասպանության ճանաչման համար, միշտ գնահատվել է հայ եկեղեցու կողմից:

Գերմանիայի հայ-առաքելական եկեղեցին միջեկեղեցական խորհրդի անդամ եկեղեցի է:

2005-ին Գերմանիայի Բունդեսբազը մատնանշել է Գերմանիայի պատմական ու բարոյական պատասխանատվությունն այս հարցում: Որպես Գերմանիայում գործող եկեղեցիներ՝ մենք միասնաբար կրում ենք այս պատասխանատվությունը և անհրաժեշտ համարում այն ամեն անգամ հիշեցնել», - նշվում է հայտարարության մեջ:

Մագդեբուրգ քաղաքում կայացած միջեկեղեցական խորհրդի ժողովն իր անդամ եկեղեցիներին և համայնքներին քաջալերում և կոչ է անում աղոթ-

քով և հիշատակի միջոցառումներով ոգեկոչել այն: Ժողովն անդրադարձել է նաև միջեկեղեցական խորհրդի նախագահության 2012-ի առաջարկին՝ տեղերում կազմակերպել միասնական միջոցառումներ հայ-առաքելական, ասորի-ուղղափառ և հույն-ուղղափառ եկեղեցիների հետ: Բոլոր եկեղեցիներում աղոթքի հրավերը պետք է լսելի դարձնել եկեղեցու զանգերի ղողանջով:

Միասնական ժամ է ընտրվել՝ 2015 թվական, ապրիլի 24, ժամը՝ 17.00:

ԻՄ ԱՌԱՋԻՆ ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻՆ»

ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳԻՆԸ

1915 թվական... Ապրիլի 24... Անժպիտ էր թուխ ամպերով պատված գարնանային երկինքը:

Այրվող եկեղեցիներ ու ծխացող շենքեր... Քարով ջախջախված հանձարեղ գլուխներ, գետը նետվող կույսեր, խաբված ու զինաթափ արված հայդուկներ...

Ձոհե՛ր, զոհե՛ր, զոհե՛ր՝ քարակոծ, ջրախեղդ, խոշտանգված, պղծված...

Երկինքը փուլ էր եկել՝ իր փլատակների տակ առնելով մորթված սերունդներ, այրվող այգիներ, արմաներկ գետեր...

Արյան ալիքներում՝ վեր կարկառած կմախքացած ձեռքեր, երկնքից փրկություն աղերսող կույրեր ու կույսեր... Ի՞նչ նպատակով Արարիչը ստեղծեց հային, ժողովրդի թևերն էին կոտորվում թռչչի կեսին... Իմ խեղճ ժողովուրդ,

իմ անթև կռունկ, ինչու՞ հետ մնացիր երամիցդ: Ու՞ր մնացին ձագերդ...

Գտի՛ր, թաքցրու՛ կոտորված թևերիդ տակ...

Ինչքա՛ն արյուն է հեղվել, ինչքա՛ն մանուկներ են որբացել, քանի՛-քանի՛ բնակավայրեր անայացել: Դուք զոհվեցիք միայն նրա համար, որ հայ էիք, քրիստոնյա, որովհետև ազնիվ էիք, խելացի, գեղեցիկ, տաղանդավոր, քան ձեզ տիրողը:

Մորթվեցին ձեր երազները բարբարոսի ձեռքով, հոշոտվեցին ձեր երեսխաները ձեր աչքի առջև կամ դեռ չծնված: Այրվեցին ձեր վանքերը, ձեր տոհմածառը, ձեր անուրջները:

Արյունարբու ոճրագործը չկարողացավ կուլ տալ զոհի վերջին պատառները: Նրանք չեն թողնի, որ բարբարոսը շնչի...

ես համոզված եմ՝ քանի կա հայ ժողովուրդը, այս օրը միշտ ծաղիկներ են դրվելու անմեղ զոհերի հուշարձանին:

«Քանի դեռ կա թեկուզ մեկ հայ, կիսալուսինը հաղթանակ չի տոնի»:

Եկել է վրեժի ու հատուցման ժամանակը, Դեր Ձորի անապատների կմախքացած դիերի վրա կանգնեցվելու է աշխարհի ամենաբարձր հուշարձանը:

Մոտ է այդ օրը, լսու՞մ եք, զոհե՛ր... Ննջեցեք խաղաղությամբ: Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվի...

Ու չի մոռացվի...

ԱՍՏՂԻԿ ԱԲԳՈՐՅԱՆ
Ստոնատուղզիական
Ֆակուլտետ, 159 խումբ

ՄԱՐՏԻ 23, 1922 ԹՎԱԿԱՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՅԵՐԻ ԱՄԵՆԱՄԵԾ ԿՈՏՈՐԱԾԸ




1918-ի ուշ աշնանը Ջանգեզուրում գտնվող զորավար Անդրանիկն իր հարձակումը դեպի Շուշի հետաձգեց ոչ միայն այն պատճառով, որ բրիտանացիները դեմ դուրս եկան, այլ նաև՝ որովհետև Շուշիի քաղաքապետից ու Ղարաբաղի պարտիզանական ղեկավարից առաջարկություն ստացավ գործողությունը հետաձգել տաս օրով՝ թաթարների հետ լեզու գտնելու նպատակով:



Ուղիղ 90 տարի առաջ սկսվեց Շուշիի կոտորածը: Նորից Նովրուզ Բայրամ մուսուլմանական տոնն էր, և այդ օրը քաղաքի հայկական թաղամասը ջնջվեց երկրի երեսից: «Բարեհոգի», «հանդուրժող», «նահիվ» նախնիները ներկայիս «ադրբեջանցիների» տոնը նշեցին տասնյակ հազար հայերի կոտորածով, թալանով և նրանց տները հրդեհելով: Այս սարսափների նկարագիրը ներկայացված է Օսիպ Մանդելշտամի նշանավոր «Կառապանը» ("Օдъѣі і њѣѣ") բանաստեղծության մեջ: Զգիտեմ՝ հայերենով թարգմանվել է արդյոք այդ բանաստեղծությունը, և ընդհանրապես՝ մեր դասականները թարգմանել են Մանդելշտամին: Կցանկանայի այս մասին իմանալ տեղյակ մարդկանցից: Իսկ առայժմ ներկայացնում են իմ սիրողական թարգմանությունը...

ՍԱՐԻԵՏԱ ՀԱՐԻՆՅԱՆ
Խորհրդային գրող, սոցիալիստական աշխատանքի հերոս (1976), Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, ստալինյան և լենինյան մրցանակների դափնեկիր (1951, 1972)

ՍԱՐԻԵՏԱ ՀԱՐԻՆՅԱՆ
Խորհրդային գրող, սոցիալիստական աշխատանքի հերոս (1976), Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, ստալինյան և լենինյան մրցանակների դափնեկիր (1951, 1972)



1918-20թթ. ողջ ընթացքում Հայաստանն ու Ադրբեջանը պայքար էին մղում Ղարաբաղն ու առաջին հերթին նրա մայրաքաղաք Շուշին իրենց ենթարկեցնելու համար: Նախ բրիտանացիների և ապա բուլշևիկների օգնությամբ Ղարաբաղը դրվեց Խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ: 1920-ի մարտին տեղի ունեցավ Ղարաբաղի հայերի ամենամեծ կոտորածը. երեք օրվա ընթացքում հայկական Շուշին ավերվեց ու հրդեհվեց, հազարավոր անգեն հայեր սրի քաշվեցին: Զարդից վեց տարի անց Շուշի է այցելում գրող Սարիետա Շահինյանը: Վերադառնալով Մոսկվա՝ Շահինյանը գրեց. «Զի մնացել ոչինչ, որ կյանք հիշեցնի: Երեք օրվա ընթացքում հրդեհի ու ավերի են ենթարկվել 7.000 տներ, սրի են քաշվել ավելի քան 12.000 հայեր»:

1918-20թթ. ողջ ընթացքում Հայաստանն ու Ադրբեջանը պայքար էին մղում Ղարաբաղն ու առաջին հերթին նրա մայրաքաղաք Շուշին իրենց ենթարկեցնելու համար: Նախ բրիտանացիների և ապա բուլշևիկների օգնությամբ Ղարաբաղը դրվեց Խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ: 1920-ի մարտին տեղի ունեցավ Ղարաբաղի հայերի ամենամեծ կոտորածը. երեք օրվա ընթացքում հայկական Շուշին ավերվեց ու հրդեհվեց, հազարավոր անգեն հայեր սրի քաշվեցին: Զարդից վեց տարի անց Շուշի է այցելում գրող Սարիետա Շահինյանը: Վերադառնալով Մոսկվա՝ Շահինյանը գրեց. «Զի մնացել ոչինչ, որ կյանք հիշեցնի: Երեք օրվա ընթացքում հրդեհի ու ավերի են ենթարկվել 7.000 տներ, սրի են քաշվել ավելի քան 12.000 հայեր»:

ՕՍԻՊ ՄԱՆԴԵՆՇՏԱՄ (1891-1938)



Ռուս բանաստեղծ, թարգմանիչ և գրականագետ: Եղել է Հայաստանում, գրել է բանաստեղծություններ, ուղեգրություններ՝ նվիրված Հայաստանին և հայությանը: Զերբակալվել է, դարձել անհատի պաշտամունքի զոհ: Հետմահու արդարացվել է: Ռուսական բանաստեղծության մեծագույն ներկայացուցիչներից է:

... Լեռնանցքում այդ բարձրաբերձ՝
Թաղամասում մահնեղական,
Խրախճանք էր մահվան հետ,
Ահավոր էր՝ զերթ երագ:
Հողն այս քաղցր ու թթու...
Լեռնային Ղարաբաղում, այսպես,
Գիշատիչ քաղաքում Շուշի
Ահուսարսափ ապրեցի ես,
Ու մռայլ էր իմ հոգին...
Քառասուն հազար մեռյալ պատուհան,
Ավերակներ ամենուր...
Աշխատանքի բողբոջը լուռ
Թաղված է այս լեռներում:
Ծխից կորած, ամոթից զուրկ,
Մերկ տներն են հոշոտվում,
Ու երկինքն է կարծես մաղում
ժանտախտ մի մուգ, կապտավուն...

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԱԾ ԵՐԿՐՆԵՐԸ

Մեր ժողովրդի համար չափազանց մեծ նշանակություն ունի Եղեռնի դատապարտումը աշխարհի կողմից: Սա ոչ միայն մեզ է պետք, այլ մեր կարծիքով՝ ամբողջ աշխարհին: Քանի որ, եթե տվյալ երկիրը դատապարտում է Եղեռնը, կարող ենք վստահություն ունենալ, որ նա եղեռն չի իրականացնի՝ զոհեր իր երկրում գտնվող ազգային փոքրամասնությունների հանդեպ:


Մեծ բան չէ մեր ուզածը աշխարհից: Սակայն չափազանց կարևոր է: Ահա ինչու՝ հատկապես վերջին 50 տարում այս ուղղությամբ մեր մտահոգությունը գնալով ավելանում է: Ճանաչելով Հայոց Եղեռնը՝ աշխարհի մարդկությունը իրեն կապահովագրեր կոտորածներից, գաղթերից:

Ոմանք, չցանկանալով նսեմացնել իրենց ժողովրդի նկատմամբ կիրառված սպանող, չեն ցանկանում Հայկական կոտորածը նույնպես եղեռն անվանել՝ իրենց վերապրածին հավասար: Ոմանք առաջին պլան են մղում տնտեսական կապերը, թուրքիայի զայրույթը չչարժելը կարևորելը՝ այն համարելով մուսուլմանական աշխարհին հակադրվելու տենդենց: Ոմանք, ապացույց բերելով Հայկական եղեռնի մոռացվածությունը, նախաձեռնում են նոր կոտորածներ...

Այն հանգամանքը, որ երիտթուրքական կառավարության կողմից Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց

Ցեղասպանության հետևանքով սպանվեցին 1.5 մլն հայեր, մնացած մասը տեղահանվեց, իսկ որոշ մասն էլ՝ հիմնականում կանայք և մանկահասակ երեխաներ, բռնի մահմեղականացվեց, գալիս է հաստատելու, որ այս հարցում անտարբեր երկրներից ոչ մեկն ապահովագրված չէ բռնության կոպիտ դրսևորումներից՝ անգամ եղեռնից: Օրինակները շատ են ոչ միայն անցյալում, այլև ներկայումս:

Սակայն, ի տարբերություն պատմական փաստերն աղավաղող, դրանք լռության մատնող կամ իրենց շահերին հարմարեցնող երկրների և անհատների, եղել են և կան նաև սրտացավ մտավորականներ, քաղաքական գործիչներ, պատմաբաններ, ի վերջո՝ երկրներ, նահանգներ, կառավարություններ, որոնք, ճանաչելով Հայոց Եղեռնը, դատապարտել են այն: Վերջիններս մեր լավագույն բարեկամների ցանկում են և վայելում են հայ ժողովրդի սերն ու երախտապարտ համակրանքը: Անհատների մասին՝ մեկ այլ առիթով, այսօր ներկայացնենք այն երկրները, որոնք Հայոց Ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչել և դատապարտել են:



ՍԵՂԱ ԹՈՐՈՍՅԱԼ

- Ուրուգվայ - 1965 թ.
- Կիպրոս - 1982թ.
- Ռուսաստան - 1995թ.
- Հունաստան - 1996թ.
- Կանադա - 1996թ.
- Ֆրանսիա - 1998թ.
- Արգենտինա - 1998թ.
- Բելգիա - 1998թ.

- Լիբանան - 2000թ.
- Իտալիա - 2000թ.
- Վատիկան - 2000թ.
- Շվեյցարիա - 2003թ.
- Հոլանդիա - 2004թ.
- Սլովակիա - 2004թ.
- Գերմանիա - 2005թ.
- Լիտվա - 2005թ.

- Վենեսուելա - 2005թ.
- Լեհաստան - 2005 թ.
- Չիլի - 2007թ.
- Արգենտինա - 2007թ.
- Հարավային Ավստրալիա - 2009թ.
- Շվեդիա - 2010թ.

ԱՄՆ-ի 50 նահանգներից 44-ը ճանաչել են Հայոց Ցեղասպանությունը:



ՀԱՅԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԴՆ ԷՆ

Հայերը, լինելով Օսմանյան կայսրության բնիկ ժողովուրդ, շատ բան են արել թուրքերի մշակույթի ու արվեստի զարգացման համար: Ստամբուլի ներկայիս դիմագիծը շատ բանով է պարտական հայազգի ճարտարապետներին: Օսմանյան կայսրության արքունական ճարտարապետները Պալանների ընտանիքի ներկայացուցիչներն էին, ովքեր հայտնի թուփ Քափի, Բեյլերբեյ, Դումաբախչե, Բեշիկթաշ, Յիլդիրիզ և այլ պալատների ճարտարապետներն էին:

Յիլդիրիզ պալատը, որը հանդիսացել է նաև արյունարբու Աբդուլ Համիդ Երկրորդի նստավայրը, կառուցվել է 19-րդ դարի երկրորդ կեսին: Պալատի կառուցման գործում իրենց զգալի ավանդն են ունեցել Պալան գերդաստանի ներկայացուցիչները, ովքեր մասնակցել են շինարարությանը, ինչպես նաև նախագծել պալատի «Մալթայի տաղավար» կոչվող շինությունը:

Ի դեպ՝ Պալանների հեղինակած Դումաբախչե սուլթանական պալատը ներկայումս թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թափի Էրդողանի նստավայրն է:

Պալատներից բացի՝ Պալանները Ստամբուլում կառուցել են տասնյակ եկեղեցիներ, մզկիթներ ու հասարակական շենքեր:

Ծագումով հայ էր նաև հանրահայտ ճարտարապետ Սինանը, ով կառուցել է սուլթան Սելիմի եգալի մզկիթը: 20-րդ դարի 60-ականներին Սինանի գերեզմանը բացեցին, արտաշիրիմում կատարեցին և միանգամայն լրջորեն ապացուցում էին, թե ոսկերից երևում է, որ նա թուրք է եղել... Սինանի աճյունը նախատեսվում էր տեղափոխել Անատոլիայի գանձերի թանգարան, բայց հետո այն անհետացավ:

Այսօր հայ շինարարի ձեռքի արդյունքը՝ նրա կառուցածը աշխարհին ներկայացնելով՝ թուրքիան ջանում է ապացուցել իր քաղաքակիրթ լինելը, իսկ թուփ Քափի թուրքական թանգարանի ցուցանմուշների մեծ մասը հայկական եկեղեցիներից թալանված ձեռագիր մատյաններ են, մասունքատուփ աջեր, ոսկեզօծ ու արծաթյա խաչեր, բուրվառներ... որոնք թանգարանից դուրս գալու պահին կարծես ձայն էին տալիս ինձ. «Հիշեք, որ լքված ենք ու գերի»:

Ս. ԹՈՐՈՍՅԱՆ



ՄԱՐՏԻ 21-Ը ՌԱՍՍԱՅԱԿԱՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է



Ռասսա տերմինը, որը հավանաբար առաջացել է արաբերեն «Ռաս» (սկիզբ) արմատից, առաջին անգամ արդի իմաստով գործածել է ֆրանսիացի մարդաբան Բեռնյեն:

Սկզբնական շրջանում առաջարկվել են ռասսաների տարբեր դասակարգումներ, սակայն առավել հաջողված է համարվում ֆրանսիացի մարդաբան Դենեկերի դասակարգումը՝ համաձայն որի գոյություն ունեն 3 հիմնական կամ մեծ ռասսաներ՝ նեգրոիդ, եվրոպոիդ և մոնղոլոիդ: Սակայն արդի մարդկության ոչ բոլոր խմբերն են պատկանում այս 3 ռասսաներին:


Հայերը պատկանում են եվրոպոիդ ռասսայի բալկանակովկասյան ճյուղի արմենոիդ մարդաբանական տիպին, որն Առաջավոր Ասիայի հնագույն մարդաբանական տիպն է: Մոնղոլոիդ ռասսան բաժանվում է հյուսիսասիական, արկտիկական, հեռավոր արևելյան, հարավասիական և ամերիկյան փոքր ռասսաների: Նեգրոիդ ռասսան բաժանվում է նեգրական, նեգրիլական, վեդդայական, ավստրալական, մելանեզական, բուշմենական փոքր ռասսաների:

Ռասսաները կապ չունեն լեզվաընտանիքների և ազգային պատկանելիության հետ: Դրանց արտաքին տվյալներն ունեն երկրորդական նշանակություն, բոլոր ռասսաներն էլ օժտված են բարձր քաղաքակրթության հասնելու

հավասար կենսաբանական կարողությամբ: Տարբերությունը հիմնականում պայմանավորված է բնակլիմայական պայմաններում օրգանիզմների հարմարվողականությամբ: Ռասսաների մեջ գոյություն չունի թերաթեքության կամ մտավոր գերազանցության որևէ գործոն՝ ուստի 19-րդ դարի կեսին առաջ քաշված բարձր և ցածր ռասսաների տեսությունը, որը ընկած էր ռասսիզմի հիմքում, գիտականորեն համարվեց անհիմն:

Չարգացած քաղաքակիրթ երկրներում ռասսիզմի բարդությամբ կարծես թե հաղթահարված է, չկա և նույնիսկ արգելվում են ռասսայական խտրականությունները հասարակական և միջամձնային հարաբերություններում, սակայն չի կարելի ասել, որ այս երևույթը արմատականորեն վերացված է:

Ռասսայական խտրականությունը մեզանում վաղուց հնացած երևույթ է: Այսօր բժշկական համալսարանում ուսանում են տարբեր ազգերի և ռասսաների ներկայացուցիչներ՝ Հնդկաստանից, Շրի Լանկայից, Մալդիվյան կղզիներից, Իրանից, Ինդոնեզիայից, Աֆրիկյան երկրներից, Եվրոպայից, ԱՄՆ-ից, Ռուսաստանից...



ՀԱՏՈՒԿ ԹՈՂԱՐԿՈՒՄ

ԿՊՁՊՈՒՄՊՈՎ ՔԺՊՇԿ

ԷՄԻԸ ԳԱՔՐԻԵՅԱՆ



ՀՀ առողջապահության նախարար Արմեն Սուրադյանի նախածեռնությամբ իրականացվող «Կոչումով բժիշկ» նախագծի հատուկ թողարկումը նվիրված է ականավոր բժիշկ-գիտնական, առողջապահության հնուտ կազմակերպիչ, պետական և հասարակական գործիչ, ՀՀ առողջապահության նախկին նախարար (1975-1989թթ.), Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների գործակալության հիմնադիր, ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանին:

Իրեն վստահված բոլոր պաշտոններում՝ Արթիկի շրջանի բուժմիավորման գլխավոր բժշկից մինչև բժշկական մայր ԲՈՒՀ-ի ղեկավար ու առողջապահության նախարար, նա աշխատեց մեծ նվիրումով ու բարձր պատասխանատվությամբ: Երբեք չկորցրեց ազնվատոհմիկ ընտանիքից ժառանգած հոգևոր բարձր արժեքները: Բազմակողմանի զարգացած այդ անձնավորությանը մոտիկից ճանաչողներն առավել քան վստահ էին, որ ինչ մասնագիտություն էլ ընտրած լինե՞ր՝ իր իմաստնությամբ ու խորաթափանցությամբ, կամքի մեծ ուժով ու աշխատասիրությամբ, անտարակույս, կառանձնանար ու մեծ ճանաչում կունենար:

Իր ժամանակակիցների հուշերում Էմիլ Գաբրիելյանն առաջին հերթին մնաց որպես հանրապետության առողջապահության ոլորտի անառարկելի հեղինակություններից մեկը, որպես Հայաստանի առողջապահության մինիստր: Հաղթահարելով խորհրդային ռեժիմի սահմանափակումները՝ իր ղեկավարած տարիների ընթացքում նա ոլորտի զարգացմանը մի նոր թափ հաղորդեց: Իրեն բնորոշ խորաթափանցությամբ Էմիլ Գաբրիելյանը ոչ միայն համակարգում ներդրում էր նորն ու առաջադեմը, այլև՝ կանխատեսելով վաղվա զարգացումները, դրանց համար ամուր հիմքեր նախապատրաստում: Այդ տարիներին կառուցվեցին բազմաթիվ հիվանդանոցային համալիրներ, կենտրոններ, կլինիկական ինստիտուտներ: Դրանցից «Դիագնոստիկա» փստորոշիչ կենտրոնն առաջինն էր ԽՍՀՄ-ում: Հետագայում՝ Երևանի օրինակով, նման կենտրոններ ստեղծվեցին ԽՍՀՄ այլ հանրապետություններում: Նրա ղեկավարման ընթացքում կառուցվեց ու զարգացավ նաև հանրապետության շրջանային հիվանդանոցների մեծ մասը: Պատահական չէր, որ առողջապահության նախարար Էմիլ Գաբրիելյանին հաճախ անվանում էին «չինարար»: Սակայն հեռատես ու մշտապես առաջ մայրող գործիչը չէր կարող բավարարվել միայն շենքեր կառուցելով: Նա մշտապես հետամուտ էր նոր սարքավորումների ձեռքբերման ու առաջատար մեթոդների ներդրման գործին:

Էմիլ Գաբրիելյանի հայրենասիրական ու մարդասիրական եռությունն առավել ցայտուն դրսևորվեց 1988-ի Սպիտակի ավերիչ երկրաշարժի օրերին: Ցավը հոգում սեղմած՝ ամիսներ շարունակ չէր հեռանում աղետի էպիկենտրոնից: Եթե չլինե՞ր նրա կազմակերպչական տաղանդը, երկրաշարժից տուժած հազարավոր երեխաներ ու մարդիկ անհրաժեշտ բժշկական օգնություն չէին ստանա: Այդ մասին հիշատակել է նաև ԽՍՀՄ այն ժամանակվա



առողջապահության նախարար Ե. Չազոյլը. «Հայաստանին պատահած ողբերգության ժամանակ էմիլ Գաբրիելյանը հսկայական ջանքեր ներդրեց տուժածներին պատշաճ բժշկական օգնություն ցուցաբերելու գործում: Հայ ժողովուրդը չպետք է մոռանա բազմաթիվ կյանքեր փրկելու մեջ նրա նվիրական ավանդը»:

Էմիլ Գաբրիելյանը համաշխարհային ճանաչում վայելող գիտնական էր: Նա մի շարք ակադեմիաների, գիտական խորհուրդների և առողջապահական միությունների անդամ էր: Առաջին հայ գիտնականն էր, ում մարդասիրության և կյանքի պաշտպանության բնագավառում ցուցաբերած նվիրման ու նվաճումների համար 1991-ին «Սպիտակ խաչի ասպետների» համաշխարհային կոնֆեդերացիայի կողմից շնորհվեցին «Մարդկության Ասպետ» և «Շեվալյե» ազնվականական տիտղոսները: Նա պարգևատրվեց նաև «Հանուն կյանքի» շքանշանով և «Ասպետական խաչով»: Մեծ Բրիտանիայում «Տարվա միջազգային մարդ», Միացյալ Նահանգներում «Տարվա մարդ» ճանաչված մեծանուն գիտնականի բոլոր պարգևներն ու տիտղոսներն ամբողջապես թվարկել հնարավոր չէ: Նա կրկին առաջինն էր, որ առողջապահության և մարդկության առջև ծառայած հիմնախնդիրների լուծման գործում նշանակալի վաստակի համար 1999-ին արժանացավ ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կալինգա» միջազգային մրցանակի դափնեկրի կոչման:

Էմիլ Գաբրիելյանը 1994-ից եղել է Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի իսկական անդամ, ակադեմիայի փոխպրեզիդենտ, տեղեկատվական գիտությունների, միջազգային ակադեմիաների ակադեմիկոս, Ռուսաստանի բնական և բժշկատեխնիկական գիտությունների ակադեմիաների անդամ, Ֆրանսիայի դեղագետների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, դեղագետների միջազգային ֆեդերացիայի, դեղաբանների համաշխարհային միության անդամ:

Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանը մեծ ճանաչում ուներ ոչ միայն մեր հանրապետությունում, այլև՝ աշխարհում:

1996-98թթ. նա եղել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր գրասենյակի (Ժնև) «Հիմնական դեղերի» ծրագրի ղեկավար կոմիտեի անդամ, 2001-06թթ.՝ ԱՀԿ-ի եվրոպական գրասենյակի (Կոպենհագեն) տնօրեն Մարկ Դանզոնին առընթեր գործող Եվրոպայի առողջության հետազոտման խորհրդատվական կոմիտեի տաս անդամներից մեկը:

Մեծ գիտնականի համար միշտ թանկ ու հարգատ մնաց Երևանի պետական բժշկական ինստիտուտը, որտեղ ուսանել, բժշկագիտական իր առաջին քայլերն էր կատարել ու նաև՝ ղեկավարել:





Ամենուր էմիլ Գաբրիելյանն իր հետ տարել է ժամանակի թարմ շունչն ու նորամուծությունը: Առավել և՛ երիտասարդ, ավյունով լեցուն տարիքում Երևանի պետական բժշկական ինստիտուտի ռեկտոր աշխատած տարիներին: Ոչ միայն մայր ԲՈՒՀ-ը ղեկավարած 4 տարիների, այլև իր ողջ գործունեության ընթացքում նա երբեք չդադարեց լինել ուսանողների սիրելի դասախոսը: Էմիլ Գաբրիելյանն իր գիտելիքներն ուսանողներին էր փոխանցում մեծ մարդուն ու գիտնականին վայել շայլությամբ ու նաև՝ խստապահանջությամբ: Այսօր մայր հայրենիքում և աշխարհի բազում երկրներում՝ ԱՄՆ-ում, Դանիայում, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունում և այլուր աշխատող նրա նախկին ուսանողների համար անմոռանալի են Էմիլ Գաբրիելյանի անկրկնելի, խորաթափանց դասախոսությունները՝ նյութի ուրույն մատուցմամբ ու տպավորիչ ծայնով...



1992-ին՝ երկրի համար տնտեսական ծանր ժամանակաշրջանում, ակադեմիկոս Գաբրիելյանը, համագործակցելով միջազգային հեղինակավոր կառույցների հետ, կարողացավ հետխորհրդային հանրապետություններից առաջինը Հայաստանում ստեղծել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձաքննության գիտական կենտրոնը»: Միջազգային շատ փորձագետների կողմից այն բարձր գնահատականի է արժանացել: Էմիլ Գաբրիելյանի համար կենտրոնն առավել կարևորվում էր առաջին հերթին մեր բնակչության առողջության ապահովման առնչությամբ: Մեծ գիտնականն իր գիտելիքներն ու փորձը հաղորդում էր նաև գործընկերներին: Նա նաև այս պաշտոնում առանձնանում էր ժամանակից առաջ նայելու ունակությամբ: Նրա հետևողականության շնորհիվ Հայաստանում ստեղծված դեղերի փորձագիտական կենտրոնը լավագույններից մեկն էր հետխորհրդային տարածաշրջանում:

ՀՀ առողջապահության նախարարության դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի վերլուծական լաբորատորիան արդեն շուրջ տասնհինգ տարի Առողջապահության համաշխարհային կազմակերպության և դեղագետների միջազգային ֆեդերացիայի կողմից կազմակերպվող մասնագիտական պիտանիության միջլաբորատոր թեստերի ամենամյա մրցույթներում բարձր արդյունքներ է ապահովում:

Է. Գաբրիելյանը 2001-05թթ. եղել է ՀՀ նախագահի մրցանակների բժշկագիտական հանձնաժողովի նախագահը:

Նա նաև «Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի վարչական կառավարման նախագահն էր, և այլն, և այլն:

Մինչև իր կյանքի վերջին օրերը նա ղեկավարեց առողջապահության ոլորտի կարևորագույն այդ կառույցը՝ դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնը: Ակադեմիկոսն ավելի քան 400 գիտական հրապարակման, դեղաբանության 5 դասագրքի, դեղաբուժության ձեռնարկների ու մեդագրությունների հեղինակ է:

Էմիլ Գաբրիելյան պետական գործչի գործունեությունը բարձր գնահատականի է արժանացել բոլոր



ժամանակներում: Բազում պարզևների շարքում, թերևս, հիշատակենք «Աշխատանքային կարմիր դրոշ» և «ժողովուրդների բարեկամություն» շքանշանները, իսկ անկախ Հայաստանի Հանրապետությունում՝ ՀՀ նախագահի կողմից շնորհված «Մխիթար Հերացու» մեդալը և Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից՝ «Սուրբ Մաշտոց-Սուրբ Սահակ» շքանշանը:

«Կյանքն ամենամեծ պարգևն է: Ամեն մի անհատի ծնունդը միլիարդավոր պատահականությունների արդյունք է՝ եզակի ընծա», - տարբեր առիթներով այս մասին հաճախ էր հիշում ու հիշեցնում էմիլ Գաբրիելյանը:

Եվ արժանապատվորեն էր ապրում Աստուծո պարգևած այդ կյանքը:

Նա վեր էր մարդկային շատ թուլություններից ու, գուցե, դրա շնորհիվ էր, որ իր ձեռքբերումներով դարձավ ժամանակի հզոր անհատականություն, տաղանդավոր գիտնական, առողջապահության և կրթության հմուտ կազմակերպիչ և վերջապես՝ լուսավոր մարդ...

Դժվար է թվարկել նաև գիտության մեջ ունեցած նվաճումների համար նրան շնորհված բազմաթիվ շքանշաններն ու մրցանակները: Դրանց մի մասն ակադեմիկոսի շնորհիվ առաջին անգամ են Հայաստանում հանգրվանել:

Էմիլ Գաբրիելյանն այդ ամենից ոչինչ չտարավ իր հետ: Փոխարենը սերունդներին թողեց առողջապահության ոլորտում և բժշկական կադրերի պատրաստման գործում ունեցած իր անուրանալի ներդրումը, պատգամեց շատ


արժեքներ, այդ թվում՝ մեծ սեր հայրենիքի հանդեպ: Սերնդակիցներին թողեց նաև անհերքելի իր հեղինակությունն ու հանրաճանաչությունը վայելելու հաճույքն ու հպարտությունը...

Մեծանալով մտավորականի ընտանիքում՝ Էմիլ Գաբրիելյանն էրգրունցի Սասնոն հորից ժառանգել էր արդարամտությունն ու սկզբունքայնությունը, իսկ հանրապետության վաստակավոր ուսուցչուհի Արուսյակ մորից՝ հոգու վեհությունն ու մաքրամաքուր հայերենը: Իսկ կյանքի դժվարություններին ու անգամ ամենամեծ հարվածներին դիմակայելու կարողությունը պայմանավորված էր ստալինյան ռեժիմի արդյունքում բռնադատված հոր՝ շուրջ 20 տարվա բացակայությամբ:

Էմիլ Գաբրիելյանի դուստրը՝ Կարինեն, ամուսնու՝ Հարություն Հովհաննիսյանի հետ բնակվում է Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Նրանք ակնաբուժության ոլորտում հաջողությամբ շարունակում են Գաբրիելյան-Հովհաննիսյան ընտանիքների բժշկական գիծը:

Լինելով անուրանալի հեղինակություն ու վառ անհատականություն՝ Էմիլ Գաբրիելյանը միաժամանակ հրաշալի ընկեր էր, հետաքրքիր բանախոս ու զրուցակից՝ տրամաբանված, ծանրակշիռ խոսքով ու նուրբ հումորով...

Էմիլ Գաբրիելյան մարդու, գիտնականի ու պետական գործչի հոգում մշտապես իշխողը սերն ու նվիրումն էին: Հենց դրանք էին նրանից ճառագող ջերմության և լույսի ակունքները...





ՄԱՐՏԻ 8-Ը ԿԱՆԱՆՅ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է

Աշխարհը կնոջը մեկ տոն է նվիրել, հայերս՝ երկու տոն՝ մարտի 8 և ապրիլի 7:

Հայ աղջիկներն ունեն 4 տոն՝ նախորդ երկու տոներից ավելանում են նաև սիրո տոները՝ Սուրբ Սարգսի և Վալենտինի:

Մարտի 8-ը համարվում է կանանց, գեղեցկության և մայրության միջազգային օր, սակայն մեր երկրում տոն է ոչ միայն այս օրը, այլև՝ ի ուրախություն հայ կանանց, մարտի 8-ից մինչև ապրիլի 7-ը համարվում է կանանց միամսյակ: Ապրիլի 7-ը՝ Մայրության օրը՝ Մարիամ Աստվածածնի ավետման տոնն է: Մարտի 8-ը Հայաստանում ոչ աշխատանքային օր է:

Իսկ ինչպե՞ս է աշխարհը նշում Մարտի 8-ը:

Մարտի 8-ը տոնում են աշխարհի 27 երկրներում:

Սակայն հարկ է նշել, որ կանանց օրը սկզբում տոնել են այլ նշանակությամբ: Մարտի 8-ը տոնվել է հեղափոխական կանանց փառաբանելու համար: Այդ օրը այն կանանց տոնն էր, ովքեր ձգտում էին տղամարդկանց հետ հավասար իրավունքներ ունենալ: Առաջին անգամ կանանց միջազգային օրը տոնվել է 1911-ին Գերմանիայում, Ավստրիայում, Շվեյցարիայում և Դանիայում: Ամենուր կանանց միջազգային օրը սկսվել է տոնվել մարտի 8-ին այն բանից հետո, երբ 1914-ին Ավստրիայի, Հունգարիայի, Գերմանիայի, Նիդերլանդների և Ռուսաստանի կանայք իրենց օրը նշեցին հենց այդ օրը:

Ժամանակի ընթացքում տոնի քաղաքական մասը մոռացվել է, և մնացել է միայն անհրաժեշտությունը՝ զարմանը պատվել կանանց՝ իրենց գեղեցկության, քնքշության համար:

Հին Հռոմում կանանց օրվա կապակցությամբ տղամարդիկ «տառապել» են վաղուց: Այդ դարաշրջանում եղել է մի օր, որը կանանց տոնն է համարվել, որը սակայն նշում էին տան տնտեսուհիները: Այդ օրը Հռոմում ամուսնացած կանայք սիրով և ջերմությամբ էին շրջապատվում, իրենց ամուսիններից նվերներ ստանում: Հարգարժան տիկիներն այդ օրը հազնում էին իրենց ամենաթանկարժեք զգեստները, բուրավետ ծաղկեպսակներ դնում իրենց վարսերին և զնում տաճար՝ աղոթելու: Այդ օրը նույնիսկ ստրկուհիներն էին նվերներ ստանում, և սա միակ օրն է եղել, որ հնարավորություն են ստացել հանգստանալու:

Նյու-Յորքում 1857-ի մարտի 8-ին տեքստիլ ֆաբրիկաներում աշխատողները առաջին անգամ երթի միջոցով բողոքեցին ցածր աշխատավարձի և աղքատ աշխատանքային պայմաններում աշխատելու դեմ: 1908-ին արդեն նրանց թռուները այս

օրը ոտքի էին կանգնել երեխաների աշխատանքի արգելման, ֆաբրիկաներում աշխատավարձի բարձրացման և, ընդհանրապես, կանանց ձայնի իրավունքների համար:

Կուպենհագենում 1910-ին կանանց միջազգային խորհրդաժողովին Կլարա Յետկինը առաջարկում է մարտի 8-ը ընդունել կանանց միջազգային տոն՝ ի պատիվ անցյալում Նյու-Յորքում տեղի ունեցած իրադարձությունների:

Ռուսաստանում այս օրը նշել են 1913-ին, և մինչ օրս մեծ շուքով, ամեն տարի բարձր տրամադրությամբ են դիմավորում այս օրը: Այստեղ մարտի 8-ին տղամարդիկ նվիրում են հիմնականում գեղեցիկ ծաղկեփյուջեր և օժանելիքներ:

Իտալիայում, ի տարբերություն մնացած երկրների, մարտի 8-ը ոչ աշխատանքային օր չի համարվում: Այս օրը Իտալիայում տղամարդիկ և կանայք միասին չեն նշում. կանայք աշխատանքից հետո գնում են



Վարդգես Սուրենյանց «Տիրամայրը»

Ի դեպ՝ այս տարի լրանում է հայ մեծանուն նկարիչ, արվեստի տեսաբան, թարգմանիչ Վարդգես Սուրենյանցի ծննդյան 155-ամյակը:

ինչ-որ ռեստորան, իսկ երեկոյան միայն հատուկ այդ օրվա համար, աշխատում են տղամարդկանց ստրիպակումբներ, որտեղ կանանց մուտքը անվճար է:

Տրանսիայում մարտի 8-ին կազմակերպվում են կոնֆերանսներ, ցույցեր, երթեր՝ կապված կանանց իրավունքների պաշտպանության հետ:

Գերմանիայում այս օրը կանանց իրավունքների իրավապաշտպանները, արհմիությունները կազմակերպվում են տարբեր միջոցառումներ:

Չինաստանում փորձում են ապացուցել, որ կանանց սրտի միակ ճանապարհը ստամոքսի միջով է անցնում: Այդ օրը կանանց հանդեպ իրենց սերը ապացուցելու և ցույց տալու համար, յուրաքանչյուր տղամարդ պետք է դրսևորի իրեն իսկական խոհարարի պես: Մարտի 8-ին Չինաստանում բոլոր կանանց համար ոչ աշխատանքային օր է: Այս օրը կանայք մասնակցում են Միսս Պեկին մրցույթին և բոլորին փորձում ապացուցել, որ իրենք աշխարհի ամենագեղեցիկ կանայք են:

ԻՆՉ ԱՆԵՄ, ՄԱՅՐԻԿ

Մայրիկ, ինձ հաճախ
 Ապտակում էիր
 Սխալիս համար
 Եվ սաստում էիր,
 Որ լաց չլինեմ:
 Բայց ցաված տեղս
 Համբուրում էիր
 Եվ իմ փոխարեն
 Ինձանից թաքուն
 Լաց էիր լինում:
 Ախ, վերջին անգամ,
 Չեմ իմանում ո՞ր
 Սխալիս համար
 Ինձ ապտակեցիր
 Կորստով քո մեծ...
 Էլ սաստող չեղավ,
 Որ լաց չլինեմ,
 Եվ ցաված տեղս
 Համբուրող չեղավ,
 Եվ իմ փոխարեն
 Իմ ցավն զգացող
 Ու լացող չեղավ:
 Ի՞նչ անեմ, մայրիկ:

ՀԱՍՈ ՍԱՀՅԱԼ



ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ
 «ԾՆՈՂՆԵՐՍ»

Իմ մայրը մի կին էր, որի համար դժբախտությունն հասկացությունը անհասկանալի մնաց ողջ կյանքում: Ամբողջ կյանքում նա իրեն դժբախտ է համարել, այդքանով էլ, իսկապես դժբախտությունը ասիական ճշտությամբ ասրելուց հեռու մնալով: Նրա համար դժբախտություն էր՝ խոտի ու ղիզելը, թեյի գդալների պակասը, ամանը ջարդվելը, պարանի կորչելը:


Բանաստեղծական հոգի էր նա, աշխարհը ողբերգականորեն վերապրող, անհանգիստ, անհագ հոգի, որքան, իհարկե, զորում էր նրա գեղջկական՝ պարզ, ոչնչով չաղարտված արտաքին էությունը: Ես նրանից ժառանգել եմ չափազանց շատ, այնքան շատ, որ մեծագույն մասով փոխարկվել է ուղիղ հակադրության:

ՊԱՐՈՆՅՐ ՍԵՎԱԿ

ՄՈՐՍ ՀԱՍԱՐ ԳԱԶԵԼ

Հիշում եմ դեմքը քո ծեր, մայր իմ անուշ ու անգին,
 Լույս խորշոմներ ու գծեր, մայր իմ անուշ ու անգին:
 Ահա նստած ես տան դեմ, ու կանաչած թթենին
 Դեմքիդ ստվեր է գցել, մայր իմ անուշ ու անգին:
 Նստել ես լուռ ու տխուր, հին օրերն ես հիշում այն,
 Որ եկել են ու անցել, մայր իմ անուշ ու անգին:
 Եվ հիշում ես քո որդուն, որ հեռացել է վաղուց,-
 Ու՞ր է արդյոք հեռացել, մայր իմ անուշ ու անգին:
 Ու՞ր է արդյոք հիմա նա, ո՞ղջ է արդյոք, թե մեռած,
 Եվ ի՞նչ դռներ է ծեծել, մայր իմ անուշ ու անգին:
 Եվ երբ հոգնած է եղել, և երբ խաբվել է սիրուց -
 Ու՞մ գրկում է հեծեծել, մայր իմ անուշ ու անգին:
 Մտորում ես դու տխուր, և օրում է թթենին
 Տխրությունը քո անծիր, մայր իմ անուշ ու անգին:
 Եվ արցունքներ դառնաղի ասա ընկնում են մեկ-մեկ
 Քո ձեռքերի վրա ծեր, մայր իմ անուշ ու անգին...

ԵՐԻՇԵ ԶԱՐԵՆՑ



ԱՐՇԻԼ ԳՈՐԿԻ
 «ՄԱՅՐՍ»

...Մայրիկի աչքերը համարում եմ պիկաստյական, իսկ հայկական տխրությունը՝ բյուզանդական: Ես ուղղում եմ նրանց. ո՛չ, սիրելի պարոններ, դուք սխալվում եք, դրանք հայկական աչքեր են... Մեր աչքերը: Մեր հայկական աչքերը ավելի շատ են խոսում, քան շուրթերը և դեռ շարունակում են խոսել, երբ շուրթերն արդեն դադարել են խոսելուց:

ԱՐՇԻԼ ԳՈՐԿԻ

Հանեմ զանձերը հայոց լեռների,
 Շաղ տամ բոլորը մորս ոտքի տակ՝
 Ախ, էլի քիչ է, ախ, քիչ է էլի:
 Շաղ տամ մարգարիտն՝ համայն ծովերի,
 Ծաղիկների հետ, մորս ոտքի տակ՝
 Ախ, էլի քիչ է, ախ, քիչ է էլի:
 Ցած բերեմ բոլոր բույլերն աստղերի,
 Չույզ աչքերիս հետ ձգեմ ոտքի տակ՝
 Մորս ոտքի տակ՝ ախ, քիչ է էլի:
 Եվ թեկուզ հանեմ իմ սիրտը բարի՝
 Գառի պես գոհեմ մորս ոտքի տակ՝
 Ախ, էլի քիչ է, ախ, քիչ է էլի:
 Լուկ մայրն է այժմ խիղճն հայրենիքիս՝
 Դարերի կյանքն էլ, թե տաս մայրիկիս,
 Աստված իմ, քիչ է, չէ, քիչ է էլի:

Քեզ ոչ թե հույսի ընդունայն խոսքեր՝
 Դաշտի ծաղիկներ կուզեի քեզ տալ,
 Քեզ ոչ թե դաշտի թռչնող ծաղիկներ՝
 Երկնքի աստղեր կուզեի քեզ տալ,
 Քեզ ոչ թե մութից դողացող աստղեր՝
 Մայր իմ, արևներ կուզեի քեզ տալ,
 Քեզ ոչ թե հազար գարնան արևներ՝
 Կյանքի ծովերը կուզեի քեզ տալ,
 Որ դար ու դարեր քո սիրով անամա
 Լցնեիր կյանքը քո սուրբ սրբությամբ,
 Մայր իմ, արևս կուզեի քեզ տալ,
 Հավերժությունը ողջ տիեզերքի,
 Թեկուզ մի վարդ էլ քեզ պարտք չմնալ,
 Ո՛վ աստվածություն՝ խիղճ ու արցունքի...

ՀՈԿՅԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

ԻՄ ԿՅՅԱՆՔԻ ՂԵՐԹԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ

Մենք հանդիպեցինք, երբ դեռ գարունն էր՝ լուսապայծառ ու հուզաթրթռ: Ես սիրում էի նրան... սիրում էի, ինչպես սիրում են կյանքում առաջին անգամ: Ես հանդարտ էի, ինչպես անալիթ ծովը, բայց նա ալեկոծեց ինձ, ես խաղաղ էի, ինչպես զեփյուռը, բայց նա փոթորկեց իմ հոգին, ուրախ ու անհոգ էի մանկան պես, բայց նա խլեց անհոգությունս և կարոտով լցրեց սիրտս: Մարմինս ու հոգիս արծազանքում էին յուրաքանչյուր ոտնաձայնի, ամեն անգամ թվում էր՝ նա է, նա, ու սիրտս տրոփում էր, ուժգնորեն բաբախում: Եվ ամեն անգամ, երբ փողոցում կանչում էին ինչ-որ մեկին նրա անունով, մարմինս սարսափելի մի դող էր պատում: Մինչև հիմա՝ այսքան ամիսներ անց, երբ լսում եմ նրա անունը, սիրտս կծկվում է, և սիրո կարոտից ծնված արցունքներս հոսում են այտերովս:

Մենք սիրում էինք իրար: Թվում էր՝ այդ սերն ավարտ չպետք է ունենար: Հիմա հարցնում եմ սրտիս, թե ի՞նչ եղավ այդ սերն ու նրա հրճվանքը... 2 տարի անցավ, ու մենք բաժանվեցինք: Աշխարհն ինձ համար կորցրեց ամեն հրապույր, իմ շուրջը դատարկություն ու միայնություն էր տիրում: Հավատս չէր գալիս, որ դա իրականություն է, ու ինձ թվում էր՝ դա երազ է, և ես ամեն կերպ փորձում էի արթնանալ այդ մղձավանջից: Հոգուս խորքում ես սպասում էի նրան, հավատում, որ հետ կգա: Ես համոզված էի, որ նա դեռ սիրում է ինձ, ես սպասում էի...

Եկավ հերթական գարունը, որ ես դիմավորում էի առանց նրա: Հանկարծ մի օր՝ պատահաբար հանդիպեցինք ինչ-որ խնջույքում: Մեր հայացքներն իրար հանդիպեցին: Նրա հայացքում այնքա՛ն կարոտ ու թախիծ կար: Նա բարձրացրեց գինով լի բաժակը, արցունքները խեղդում էին նրան, բայց նա ուժ գտավ իր մեջ և ուղիղ աչքերիս նայելով՝ ասաց. «Ես առաջարկում եմ խմել սիրո կենացը, բոլոր սիրահարների կենացը, ովքեր ճակատագրի բերումով կորցրել են իրար»: Իրար էին զարկում բաժակները, ու մեր բաժակները ևս դիպան իրար: Դողացին մեր ձեռքերն, ու գինու մի քանի կաթիլ արցունքի պես թափվեցին: Երկուսիս աչքերից էլ արցունքի կաթիլներ գլորվեցին՝ մաքուր ու անարատ՝ ինչպես մեր սերը: Բայց ոչ ոք չնկատեց մեր տխրությունը: Նա մոտեցավ ինձ ու ասաց. «Կգա ժամանակ, երբ դու կիմանաս, թե ինչ եղավ, ինչու և ինչպես: Ներում չեմ խնդրում, քանզի ես ինձ չեմ ների երբևէ, առավել ևս՝ դու, բայց հույս ունեմ, որ ինձ կհասկանաս: Երբ ես աղջիկ ունենամ, նրան կկոչեմ քո անունով»: Վերջին խոսքերն ասելով՝ նա բացեց դուռն ու զնաց: Ես հենվել էի դռանն ու դռնից այն կողմ գզում էի նրան, նրա շնչառությունը, նրա քերմությունը: Այդ պահին մեզ բաժանում էր ընդամենը մի դուռ, որը մեզ բաժանելու էր հավիտյան:

Դրանից հետո ես նրան շուրջ 10 տարի չտեսա: Ու մի օր էլ՝ գարնան մի գեղեցիկ օր, մենք հանդիպեցինք փողո-



ցում: Մեր շուրթերին նույն ժպիտն էր՝ ինչ տարիներ առաջ: Այնպիսի կարոտ կար մեր աչքերում ու այնպիսի հրճվանք, որ ամեն կերպ փորձում էինք այն թաքցնել:

- Ինչպե՞ս ես,- հոգատար ծայրով ասաց նա,- երջանի՞կ ես:

- Փորձում եմ երջանիկ լինել,- հուզմունքս զսպելով՝ ասացի ես,- իսկ դու՞:

Այդ պահին մի փոքրիկ աղջիկ մոտեցավ, բռնեց նրա ձեռքից և ասաց. «Հայրիկ, մայրիկը քեզ է սպասում»: Ես ցնցվեցի այդ խոսքերից: Նա նայեց ինձ, նայեց իր աղջկան... Իսկ հետո՝ զարմանալի զուգահեռությամբ, ինձ մոտեցավ իմ տղան ու ասաց. «Մայրիկ, հայրիկը քեզ է սպասում»:

Մենք նայեցինք իրար ու սուսկումով հասկացանք, որ թեև դեռ սիրում ենք իրար, բայց անդամալիորեն կորած ենք միմյանց համար: Քիչ անց ես լսեցի, թե ինչպիսի քնքշանքով նա տվեց իմ անունը, ես շրջվեցի, բայց... նա իր դատրիկին էր կանչում:

Նա գրկեց իր աղջկան՝ ամուր, շատ ամուր, ես էլ գրկեցի իմ որդուն՝ քնքշանքով ու սիրով: Մենք նայեցինք իրար ու հասկացանք, որ ոչ թե մեր զավակներին գրկեցինք, այլ իրար՝ կարոտի աներևույթ ու անհաս թևերով...

Ա. ՀԱԿՈՒՅԱՆ

ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ԿԱՏԱԿՈՒՄ ԵՆ ՏՂԱՄԱՐԴԻԿ



Մարտի 8-ի առավոտյան արթնանալով կինը, երազկոտ ձգվելով, ասում է ամուսնուն.

- Գիտե՞ս ինչ հրաշալի երազ եմ տեսել: Իբր մարտի 8-ի առթիվ դու ինձ նվիրում ես աղամանդե մատանի: Տեսնես ի՞նչ է նշանակում այս երազը:

- Երեկոյան կիմանաս,- խորհրդավոր ժպտալով ասում է ամուսինը:

Կինը երեկոյան զարդարում է տոնական սեղանը, վառում ռոմանտիկ մոմերը...

Ամուսինը գալիս է տուն և նույն խորհրդավոր ժպիտով նրան մեկնում կարմիր ժապավենով մի գեղեցիկ տուփ: Կինն անհամբեր բացում է տուփը, իսկ այնտեղ ընդամենը գիրք է՝ «Երազահան»:



Բար է մտնում մի տղամարդ, պահանջում է ճաշացուցակը ու հանկարծ սկսում այնտեղ որոշ էջերում ինչ-որ բաներ ջնջել:

- Այդ ի՞նչ եք անում,- հարցնում է զարմացած մատուցողը...

- Ձեզում եմ բոլոր այն ուտելիքները, որոնք 3 դրվարից թանկ արժեն:

- Բայց ինչու՞...

- Մեկ թոպեից կինս այստեղ է գալու:

- Սիրելիս, դու չքնաղ ես՝ ինչպես այս ծաղիկները:

- Իսկ ես մտածում էի, որ չքնաղ եմ ինչպես ոսկե ապարանջանը...

- Ոչ, սիրելիս: Դու չքնաղ ես այս ծաղիկների պես:

- Հայրիկ, իսկ ինչու՞ է մարտի 8-ը օրացույցում կարմիր գույնով ներկված:

- Տղաս, դա մեր՝ տղամարդկանց արյան գույնն է:



Տղամարդը մտնում է խանութ՝ մարտի 8-ի առթիվ նվեր գնելու համար: Վաճառողուհուն խնդրում է օգնել ընտրության հարցում:

- Ձե՞ր կնոջ համար, թե՞ ավելի թանկ:



- Եի՞շտ է, որ ձեր աղջկան ամուսնացնում եք:

- Այո, մի շաբաթից:

- Իսկ փեսացուն գիտի՞, որ նրա մի աչքը ապակուց է:

- Ուզում եմք անակնկալ անել...

- Սիրելիս, ես երազում եմ, որ դու այնպիսի արտասովոր նվեր մատուցես ինձ, որ ուրախությունից հագիվ կարողանամ ասել. «Վաու՛, Լեքսուս»:

Մի երիտասարդ աղջիկ է փախցնում: Աղջկատան մոտից տաքսի է վարձում և ուղևորվում երկաթուղային կայարան: Երբ տեղ են հասնում, երիտասարդը ցանկանում է վճարել տաքսու վարորդին:

- Հարկավոր չէ,- ասում է տաքսու վարորդը,- աղջկա հայրը նախապես վճարել է:

Հանդիպում են երկու ընկերուհի.

- Դու արդեն հինգ տարուց ավելի է նշանված ես այդ տղայի հետ, ինչու՞ չես ամուսնանում:

- Ես չեմ ուզում ամուսնանալ, երբ նա խմած է, նա էլ իր հերթին է հրաժարվում, երբ լուրջ է լինում:



- Դուք կարո՞ղ եք ընտանիք պահել,- հարցնում է հայրը իր աղջկա ձեռքը խնդրող երիտասարդին:

- Դե, իհարկե:

- Ես շատ ուրախ եմ: Բայց ինկատի ունեցե՞ք՝ մենք 8 հոգի ենք:

- Ասացեք, խնդրեմ, դուք պատահաբար համակարգչի հոտով օծանելիք չունե՞ք, -վաճառողուհուն հարցնում է մի կին:

- Բայց ինչի՞ համար,- զարմանում է վաճառողը:

- Ուզում եմ գոնե այդ կերպ ամուսնուս ուշադրությունը գրավել:



ԾԱՂՐԱԾՈՒՆԵՐԻ ԱՐՔԱՆ ՍԻՐՈՒՄ ԷՐ ԿՅԱՆՔԸ...

«Ես հայ եմ, դեպքերի բերումով ծնվել եմ Մոսկվայում: 9 տարի եղել եմ ռինգում, փոխել եմ բազմաթիվ մասնագիտություններ և երբ 22 տարեկան էի՝ ինձ մնացել էր արտիստ դառնալ: Գրել սկսել եմ այդ իսկ ժամանակից, ակամա: Ոչ մի գրող չուզեց համագործակցել, և ստիպված էի ինքս ինձ համար սցենարներ գրել: Հիմա սարսափով մտածում եմ, իսկ եթե հայտնվի իսկական սցենարիստը: Սիրում եմ ծով, աշուն, Վան Գոգին: Վախենում եմ բարեկեցիկ կյանքից... Գլխավորն ինձ համար պատասխանատվությունն է իմ շուրջը կատարվող ամեն ինչի համար»:

Լեոնիդ Ենգիբարյան



Նկարը՝ Ալեքսանդր Սադոյանի

Լյոնան խմում է՝ չիմանալով, որ շամպայնը նեղացնում է անոթները... 1972-ի հուլիսի 25-ին նա մահանում է սրտի կաթվածից: Այդ ժամանակ նա ընդամենը 37 տարեկան էր՝ ճիշտ այնքան, որքան իր կուռքերը՝ Վան Գոգն ու Պուշկինը:

Մտածելու, խորհելու առիթ էր տալիս նաև Ենգիբարյան գրողը...

Հաճելի դիմագծերով, մանկական թափանցիկ հոգով, բարի աչքերով, բացառիկ տաղանդի տեր մի երիտասարդ, որին շատ սերունդներ պիտի համարեն իրենց ուսուցիչը, որի չծերացող արվեստը դեռ երկար ճանապարհի ունի անցնելու:

Շատ կարճ կյանք ունեցավ Լեոնիդ Ենգիբարյանը, ավելի կարճ էր ստեղծագործական գործունեությունը: Նա ասում էր, որ ապրելու է ընդամենը 37 տարի: Բայց նա մեռնել էր շտապում, ծաղրածուների արքան սիրում էր կյանքը...

Լուսավոր ու ողբերգական այս կերպարի ինքնատիպ փիլիսոփայությունը հարազատ էր ինչպես փոքրերին, այնպես էլ մեծերին: Ենգիբարյանը կուտրեց ծաղրածուի ավանդական պատկերացումներն ու խնայեց գրիմի անթիվ կիլոգրամներ: Նրա դեմքին չկային մեծ քիթ, նկարած հոնքեր, ժպտացող բերան, նա չէր հագնում փք-

ված տաբատ ու խոշոր կոշիկներ: Դրանց փոխարեն խոսում էին նրա պարզ ու հստակ շարժումները: Բազմաթիվ են Ենգիբարյանի ստեղծած կերպարներն ու իրավիճակները, նրա նպատակը հանդիսատեսին ծիծաղեցնելը չէր միայն, այլ՝ ստիպել, որ մտածի: Նա ճանաչված ու սիրված էր հանդիսատեսի կողմից, սակայն արտիստի անձնական կյանքը այդքան էլ չէր ստացվում: Անձնական կյանքի դժվարություններին գումարվում է արտասահմանյան ուղևորությունների և հյուրախաղերի արգելքը: 1972-ի հուլիսին նա մեկնում է Մոսկվա: Այդ ամիս Մոսկվայում անձախաղեպ շոգ էր: Այրվում էին մերձոսկովյան տորֆի ճահիճները: Հեղձուցիչ օդից շնչելը դժվարացել էր: Լեոնիդն իրեն վատ էր զգում: Սայրը բժիշկ է կանչում, փստորոշվում է թունավորում: Բժշկի գնալուց հետո ուժեղ ցավեր են սկսվում, և մինչև շտապօգնության հասնելը մայրը որդու խնդրանքով 1 բաժակ շամպայն է բերում:

Գունդը ափի մեջ

Կրկեսում մարդիկ բարդ համարներ են անում:

Նրանք ճախրում են գմբեթի տակ, տասնյակ իրերով ածպարարություն են անում, հետո ձեռքերի վրա են կանգնում, ու դա, հաստատում են, հատկապես բարդ է ու դժվար է սովորելը:

Եվ բարդ է ոչ միայն այն պատճառով, որ անվերջանալի մարզումներից հետո գիշերը կցավեն ձեր ուսերը, կայտուցվեն թևերը, և աչքերն արյունով կլցվեն...

Այս ամենն, իհարկե, ծանր է և, այնուամենայնիվ, այն վաղ թե ուշ մոռացվում է: Միայն մի բան երբևէ չի մոռացվում՝ երբ կանգնում ես երկու ձեռքերի վրա, կամաց պոկում ես մի ձեռքդ և հասկանում՝ ափիդ մեջ երկրագունդն է:

Մի քանի խոսք երևանի մասին

Մի անգամ, երբ աշունը իջնելով լեռներից՝ քաղաքի փողոցները դարձրեց շագանակաոսկեգույն, քաղաք եկավ ծաղրածուն: Զգիտեմ, գուցե նա սիրահարվեց երկարոտն ու թուխ աղջկան, կամ գուցե դա հեքիաթ է... Բայց ճիշտ է, որ նա հեռացավ՝ աչքերը լի աշնանային անձրևներով:

Արտիստին

Ճանապարհը միակ բանն է, որ երբեք չի դավաճանի քեզ: Կճանձրացնի հարմարավետությունը, սերը կսառի, և կմնա միայն ճանապարհն ու ինչ-որ մի տեղ հեռվում՝ հույս, հույս, որ նորից կլինի սեր, կլինի անդորր...

Իսկ այսօր դու կրկին ճանապարհին ես, և քեզ հետ է նորից անհանգստությունը:

Մի ստիր ինքդ քեզ՝ առանց այդ դու չես կարող: Սերն ու անդորրը ընդամենը պատրանք են, առանց որոնց ճանապարհ չի լինում:

Աղջնակին, որ թռչել գիտի

Միայն մի վախեցիր: Քեզ երբեք ոչինչ չի պատահի, որովհետև դու երկու սիրտ ունես: Եթե օդում մի վայրկյանով մեկը կանգ առնի, կողքից մյուսը կգարկի:

Դրանցից մեկը մայրդ է տվել քեզ: Նա կարողացավ դա անել, որովհետև տասնինը տարի առաջ կարողացավ սիրել, սիրել... Մի ծիծաղիր՝ սիրելը բարդ է: Իսկ երկրորդ սիրտդ տվել են ես: Պահիր կրծքումդ իմ խենթ սիրտը: Ու ոչնչից մի վախեցիր: Նրանք կողք կողքի են՝ թե մեկը կանգ առնի, մյուսը կգարկի: Միայն ինձ համար մի անհանգստացիր, ինձ թեթև է քայլել գետնի վրայով, դա հասկանալի է յուրաքանչյուրին: Իմ սիրտը՝ քո կրծքում:

ՃԱՆԱԶԻՐ ԵՎ ՔԵԱՐԱՏԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԴ



KOMITAS QUARTET



«Կոմիտաս» քառյակը բազմիցս հյուրընկալվել է բժշկական համալսարանում: Ամենավերջին ելույթը հունվարին էր, որի ընթացքում քառյակի ղեկավար Էդուարդ Թադևոսյանը, ի թիվս այլոց, հանդես եկավ մտերիմ ընկերոջ՝ Էմիլ Գաբրիելյանի մասին ջերմ հիշողություններով:

Ժամանակակից կատարողական արվեստի նշանակալից երևույթներից մեկը Հայաստանի վաստակավոր կուլտուրի, Կոմիտասի անվան պետական լարային քառյակն է: Կամերային անսամբլներից քչերին է հաջողվում երկար ապրել և, մանավանդ, պահպանել գեղարվեստական ինքնատիպությունը: Եզակիներից մեկն էլ Կոմիտասի անվան լարային քառյակն է, որը այս տարի բոլորում է իր գոյության 90 տարին:

Այն «ծնվել» է Մոսկվայի կոնսերվատորիայի հայ ուսանողներ Ավետ Գաբրիելյանի (1-ին ջութակ), Լևոն Օհանջանյանի (2-րդ ջութակ), Միքայել Տերյանի (ալտ) և Սերգեյ Ասլանազյանի (թավջութակ) նախաձեռնությամբ (ղեկավար Ե.Գուզիկով): Ստեղծման առաջին իսկ ամիսներից «Մոսկվայի Կոնսերվատորիայի առաջաշավածների քառյակը» գրավեց ոչ միայն երաժշտասեր հասարակության, այլև մասնագետների ուշադրությունը:

«Այս երիտասարդ քառյակը ոչ հեռու ապագայում կգրավի առաջին տեղերից մեկը»: Երկար ժամանակ չպահանջվեց, որպեսզի Մ.Իպոլիտով-Իվանովի այս խոսքերն իրականություն դառնան: Օրեցօր զարգացում ապրելով՝ քառյակը մեծ սեր ու ճանաչում ձեռք բերեց: Հայաստանի կառավարության որոշմամբ 1932 թվականին նրան շնորհվեց մեծն Կոմիտասի անունը:

«Կոմիտասի անունը կրել՝ նշանակում է ունենալ կատարողական մեծ արվեստ, հուզականություն, անմիջականություն, բարձր կուլտուրա:

Կոմիտասի անունը կրել՝ նշանակում է արվեստն ի սպաս դնել ժողովրդին:

Կոմիտասի անունը կրել, վերջապես,

նշանակում է, եթե ոչ նրա օրինակով գյուղից գյուղ, գավառից գավառ շրջել հայ երգը գտնելու, ձայնագրելու, մշակելու համար, ապա գյուղից գյուղ, քաղաքից քաղաք, երկրից երկիր շրջել՝ հայ և համաշխարհային երաժշտության նվաճումները բարձրարվեստ մատուցելու բոլորին և ամենից առաջ սեփական ժողովրդի ամենալայն զանգվածներին»: (Հ.Խանջյան)

Կարճ ժամանակամիջոցում քառյակն աննախադեպ առաջընթաց ապրեց. ԽՍՀՄ Կոմպոզիտորների միության հայտարարած մրցույթում (1936թ.) այն արժանացավ առաջին մրցանակի, լարային քառյակների համամիութենական մրցույթում (1938թ.)՝ Մեծ թատրոնի քառյակի հետ, նորից դարձավ առաջինը:

«Կատարողներից յուրաքանչյուրը վիրտուոզ է: Վիեննան երկար տարիներ սպասեց այսպիսի անսամբլին ունկնդրելուն ու զգաց, որ իր սեփական լարային քառյակներից և ոչ մեկը փայլով ու փառքով նույնիսկ մոտ չի կարող կանգնել Կոմիտասի անվան քառյակին», - այսպես է գրում ավստրիական մամուլը Վիեննայում կայացած համերգից հետո:

Լսելով «Կոմիտաս» քառյակի կատարումը՝ ԱՄՆ-ում՝ երաժշտաքննադատներից մեկը գրում է. «Խորհրդային Միության մի հանրապետությունից չորս երաժիշտները, կարծեք, կախարհել էին լսարանին... Լավ են նվագում հայերը»:

Քառյակի երաժիշտներից յուրաքանչյուրի կատարողականությունը մշտապես աչքի է ընկել անհատականությամբ և ինքնատիպությամբ. միևնույն ժամանակ նրանք անբախտելիորեն կապված են և լրացնում են միմյանց՝ կազմելով օրգանական ամբողջություն: Կոմիտասիցների ելույթների ժամանակ անհատականը դառնում է կուլտուրի, իսկ կուլտուրիվը՝ անհատական:

Չնայած քառյակի պատմության ընթացքում նրա կազմը բազմիցս փոփոխվել է, այդուհանդերձ անսամբլի նվագը միշտ աչքի է ընկել բարձր պրոֆեսիոնալիզմով, չափի զգացումով: Քառյակը երբեք չի տարվում արտաքին էֆեկտներով, նվագում է զուսպ, բայց ներքին ջերմությամբ:

Հուսանք, որ հետագայում նույնպես անսամբլի երաժիշտներից յուրաքանչյուրն, իր ներդրումն ունենալով, նաև կպահպանի ու կպարգացնի տասնամյակներ առաջ արմատացած ավանդույթները՝ միշտ արժանագույն կերպով տանելով Կոմիտասի անունը երկրից երկիր, աշխարհից աշխարհ:

«Կոմիտասի անվան քառյակը հանդիսանում է հայ ազգային կատարողական արվեստի բարձրագույն նվաճումներից մեկը, այդ արվեստի պարծանքը:

Նրա համերգները միշտ մեծ երաժշտություն են՝ առաջին նոտայից մինչև վերջինը...»: (Էդ. Միրզոյան)

ՏԱԹԵՎ ՈՍԿԱՆՅԱՆ



Ծնվել եմ 1991 թվականի օգոստոսի 30-ին : Սովորում եմ ԵՊԲՀ-ում՝ մագիստրատուրայի 2-րդ կուրսում: Ստեղծագործել սկսել եմ 16 տարեկանից: Ստեղծագործություններս տպագրվել են «Մեգապոլիս» ամսագրում, ԵՊԲՀ-ի «Ապագա բժիշկ» պաշտոնաթերթում, «Նոր-Դար» համահայկական հանդեսում, Ռազմիկ Դավոյանի նախաձեռնած «Համբույրին կարոտ ալ կարմիր շուրթեր» տարեգրքում, «Նուռ», «17 անուն» ժողովածուներում, ինչպես նաև 2015-ին լույս տեսած «Երիտասարդ գրողներ» անթոլոգիայում, որի շնորհանդեսը տեղի ունեցավ հունվարի 30-ին:

2013-ին մասնակցել եմ «Նուռ» մրցույթին, որը կազմակերպվել էր «Երիտասարդական շարժում» հասարակական կազմակերպության և Երևանի Գրողների միության նախաձեռնությամբ՝ զբաղեցնելով երկրորդ տեղը: 2014-ին մասնակցել եմ Հայաստանի գրողների միության «Իրինա Գյուլնազարյանի» անվան մրցույթին՝ կրկին զբաղեցնելով երկրորդ տեղը:

Հույս ունեմ, որ այս տարի՝ պետական հովանավորությամբ, լույս կտեսնի իմ առաջին գիրքը:

Ի դեպ՝ գրել եմ նաև երգի խոսքեր «Վահագ Ռաշ» բեմդի համար:

ԳԻՏԵ՞Ս

Գիտե՞ս ծագել եմ լույսերն իմ երկրի, Բացել իմ խորքի կարոտները փակ, Մշուշը նոր- նոր իղձեր կերկնի, Կթաղի ցավն իմ լուսամփոփի տակ:

ԴՈՒ

Իմ զապված հեկեկանքի, Իմ չծնված արցունքների, Իմ գահավեժ անրջանքի, Իմ չստացած արցունքների, Իմ անհաստատ, անուժ ջանքի, Իմ չփորված ակունքների, Իմ թևաբեկ, հեզ ճախրանքի, Իմ հուսաբեկ հավատամքի, Իմ թույլ սրտի, ամուր կամքի Հատուցումը դու ես, իմ Մեր...

ԴՈՂ

Իմ խոսքերը տեղ կհասնեն, Թեկուզ մի քիչ խեղճ ու թերի, Թեկուզ բացն էլ չլրացնեն Իմ չբավոր սպասումների...

Իմ խոսքերը տեղ կհասնեն, Որպես դողն է մարմին հասնում Ու բյուրեղյա իր մատներով Ոգու նյարդերը ցավեցնում:

Ես դողալով սպասում եմ դեռ, Կանցնեմ ժամեր, դարեր կանցնեն, Ինչ-որ դողով, ինչ-որ մի տեղ, Իմ խոսքերը Ձեզ կհասնեն...

ՄԻ ՊԱՀ

Մի պահ ամեն բան կարճ է, ընդհատուն, Տարեց Ուրանի կյանքն է ընդհատվում Ընդամենը մեկ-երկու վայրկյանում. Աստված, թե մի քիչ կյանք տայիր մարդուն:

Մի պահ այրում է խոսքը մեր լեզուն, Իսկ լռությունն էլ ընդվզում ներսում... Լռում ենք, խոսում, ինչպես որ հագում. Աստված, թե մի քիչ կամք տայիր մարդուն:

Մի պահ ուզում ենք վայրկյանը մեռնի, Որ հանկարծ ժամը նորից չծնվի, Մահն էլ չխեղդի ձայնը կոկորդում. Աստված իմ, ժամ չէ, դար տայիր մարդուն:

Մի պահ ուզում ենք երկինքը պատռել, Մահվան չէ՛ կյանքի ճամփաներ փնտրել, Մաղձոսներ երգել գոր, գիշեր արթուն. Աստված թե մի քիչ սեր տայիր մարդուն...

Մի պահ ուզում ենք գոռալ ու լացել, Ներսի ժանգոտված կողպեքը բացել: Կայսրինը՝ կայսրին. Աստծունը՝ Աստծուն... Աստված, թե մի քիչ խեղճ տայիր մարդուն:

ՃԱԲ

Թե սիրաս մի օր հուզմունքից ճաքի, Թող պայթի ոչ թե ձերուկ մշակի Ձեռքին դողացող բաժակի նման, Այլ ինչպես կարմիր կեղևը նռան.

Թե մի օր հոգնեն ինձ բարև տալուց, Թող հոգնեն նաև արև թաղելուց, Թող հրաժարվեն դերեր խաղալուց, Երկու պինդ ոտքով անվերջ կաղալուց.

Թե մի օր հույսիս պաշարը հատնի, Թե կյանքն իմ ապրած օրերը վատնի, Թող պարպվեմ ինչպես վառողը բոցի, Այլ ոչ թե մաղած այլուրը հացի.

Չէ, ես չեմ հոգնում բառեր մաղելուց, Այլ բառերի մեջ գուտ մանրանալուց, Ես վախենում եմ քացախ դառնալուց, Եվ ոչ թե զինու պես դառնանալուց:

ՄՊԱՍՈՒՄ

Երջանկություն, երբ դու գաս , Իմ պատուհանը քեզ համար Բաց կլինի, Աչքերս փակ, երկինքը թաց, Մեղանին էլ մի քիչ Աղ ու հաց կլինի:

Երջանկություն, երբ դու գաս, Ինձ մոտ հազար տարվա տանջող Հարց կլինի. Երջանկություն, քո գալուստը Սպասումներիս դիմաց Տրված վարձ կլինի°:



17-ԱՄՅԱ ՀԱՅՈՒՅԻՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՅՈՒՏ Է ԱՐԵԼ

Աշխարհում ամենամեծաթիվ գաղթօջախներ ունեցող երկրներից ենք՝ լինելով ամենափոքր ազգերից մեկը: Պատմությունը, մեր հարևան երկրների վարած քաղաքականությունը հանգեցրել են սեփական երկրից ժողովրդի տարհանմանը և աշխարհով մեկ սփռելուն, որի արդյունքում գոյացել է սփյուռքահայ գաղթօջախ բառակապակցությունը:

Ուրիշի երկիրը շենացնելուց զատ՝ հայերը նաև իրենց գործունեությամբ և գիտելիքներով, ուր որ գտնվել են, ապացուցել են, որ գտնվում են խելացիների, մտածողների, ստեղծողների, կազմակերպողների շարքերում: Փաստերի թվարկումը չի մտնում այս առնչությամբ մեր այս թողարկման մեջ, ուղղակի նշենք, որ այդպիսիները շատ-շատ են՝ անկախ տարիքային խմբերից: Այսօր այդպիսիներից մեկի մասին խոսում է աշխարհը՝ ուրախացնելով և հպարտության զգացումով համակելով հայերին:

Ա.Թ.



Աճնայի ստեղծած սարքավորումն արժե 500 դոլար: Այն ավելի մատչելի է, հարմարավետ, և մարդիկ այն կարող են գնել և օգտագործել նաև տանը:

Դիալիզը բժշկական գործընթաց է, որի ընթացքում մաքրվում է հիվանդների արյունը: Դիալիզի ենթարկվում են հիմնականում այն մարդիկ, ովքեր ունեն երիկամների հետ կապված խնդիրներ: Այդ գործընթացը պետք է կիրառել շաբաթական մի քանի անգամ: Փողհարյանը հայտարարել է, որ նա ցանկանում է իր գյուտով ավելի զարգացնել դիալիզի գործընթացը, որպեսզի այն հիվանդների համար շատ ցավոտ չլինի:

«Դիալիզի գործընթացը բավական մեծ էներգիա է խլում հիվանդներից: Դիալիզից հետո նրանք շատ հոգնած տեսք են ունենում: Այս նոր սարքով հիվանդը անհրաժեշտություն չունի շաբաթական երեք անգամ գալ հիվանդանոց: Շատերը շարժունակության խնդիր ունեն, և տանից հիվանդանոց ճանապարհը կրկնակի բարդ է նրանց համար», - ասել է Աճնան CBS հեռուստաընկերությանը:

Իր գյուտի ստեղծման համար 17-ամյա Աճնան բավական երկար ժամանակ որպես կամավոր աշխատել է տեղի հիվանդանոցներից մեկում, ուսումնասիրել դիալիզի ենթարկվող հիվանդներին: Երբ նա ընդգրկվել է ավագ դպրոցի գիտության վերաբերյալ նախագծում, նախընտրել է աշխատել մի գյուտի ուղղությամբ, որը կարող է փոխել առողջապահական համակարգը և հեշտացնել այդ հիվանդների կյանքը: Այս գյուտը ստեղծելու համար աղջկանից պահանջվել է 300 ժամ:

Փողհարյանը հույս է հայտնել, որ մի օր իր գյուտը կիրառելի կլինի ամբողջ աշխարհում:

«Չնդկաստանում և Պակիստանում բնակվող հիվանդների 10 տոկոսը հնարավորություն չունի գնալ հիվանդանոց և այդ բուժումից օգտվել: Դա նրանց համար հասանելի չէ», - ասել է Աճնան:

Այս գյուտի շնորհիվ Աճնան շահել է մրցանակ և կրթաթոշակ: Hema-Quebec ընկերությունը նրան առաջարկել է ամառային պրակտիկա, որպեսզի իր գյուտն իրականացնի իրական կյանքում:

«Մարդկությունը կշահի այս սարքավորումից, որը թույլ կտա նվազեցնել բժշկական ծառայության գինը, բժշկական գործընթացները: Ընդհանուր առմամբ՝ սա հրաշալի նախածեռնություն է», - ասել է Hema-Quebec ընկերության կիրառական հետազոտությունների տնօրեն Լուի Թիբոն:



17-ամյա կանադահայ Աճնա Փողհարյանը հայտնվել է ոչ միայն Կանադայի հասարակության և լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում: Աճնան, ով սովորում է տեղի ավագ դպրոցներից մեկում, կարողացել է դիալիզի նոր սարք ստեղծել, որը կարող է համարվել հեղափոխություն առողջապահության ոլորտում:

Տևական ժամանակ ուսումնասիրելով դիալիզի սարքերի աշխատանքն ու տեխնիկական հագեցվածությունը՝ Աճնան կարողացել է դրանց նոր նախատիպը ստեղծել:

Դիալիզի սարքերն արժեն մոտավորապես 30.000 դոլար:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, ԲԺԻՇԿ



Կյանքը կարճ է, արվեստի ճանապարհը՝ երկար, հարմար պահը՝ կարճատև, փորձը՝ խաբուսիկ, եզրահանգումը՝ դժվար: Դրա համար ոչ միայն ինքը՝ բժիշկը, պետք է օգտագործի այն ամենը, ինչ անհրաժեշտ է, այլև հիվանդը, նրան շրջապատողները և ողջ արտաքին իրավիճակը պիտի նպաստի բժշկին՝ իր գործունեության մեջ:

ՀԻՊՈԿՐԱՏ

«...Դեռ փոքրուց սիրել եմ բժշկի մասնագիտությունը: Այդ ուղին բռնելիս՝ որևէ մեկը չի ուղղորդել ինձ: Չնայած այս պահին աշխատում եմ որպես ընտանեկան բժիշկ, սակայն, ի սկզբանե, երագել եմ դառնալ սրտաբան: Բայց, երբ եկավ նեղ մասնագիտացում ընտրելու պահը, ինչ-ինչ պատճառներից ելնելով՝ ընտրեցի այս ուղին: Հիշելով առաջին փորձս՝ ամենաշատը տպավորվել է առաջին աշխատանքային օրս: Եկել էր մի պապիկ, ում եղունգը պետք է հեռացվեր: Նա պնդում էր, որ հենց ես անեմ դա՝ չնայած իմ հորդորներին՝ դիմել վիրաբույժին: Ընդհանրապես՝ ես վախ և անվստահություն ունենում եմ ոչ թե որպես բժիշկ, այլ որպես անհատ: Իսկ, ընդհանուր առմամբ, ես խիզախ անձնավորություն եմ: Կարծում եմ՝ բժիշկ լինելու համար դա կարևոր հատկանիշ է: Եթե դու վախեցնաս, էլ ինչպես վստահություն ներշնչես հիվանդին: Դեռ ուսանողական տարիներին, երբ գնում էինք պրակտիկայի, ես կանգնում էի վիրաբույժի կողքին և օգնում նրան՝ վստահ և առանց վախեցնալու:»

Սակայն պետք է հիշել, որ բուժումը այնպիսի մի գործընթաց է, որ 100 տոկոսով կանխորոշել արդյունքները՝ անհնար է: Յուրաքանչյուր մարդու օրգանիզմ յուրովի է արձագանքում բուժմանը: Երբեմն կարող եմ լինել ձախողման պահեր, սակայն բժշկի կոչումն այնպիսին է, որ պարտավորեցնում է միշտ զգոն ու սրտացավ լինել, երբեք չընկճվել ու այդպիսով վստահություն ներշնչել հիվանդին:

Կարևորում եմ բժիշկ-հիվանդ հարաբերությունները: Բժշկի մոտեցումը պետք է շատ ճիշտ և տեղին լինի: Ես լսում եմ իմ հիվանդների զանգատները՝ և՛ առողջությանը վերաբերող, և՛ անգամ անձնական: Մենք՝ ընտանեկան բժիշկներս, առաջին օղակի բժիշկներ ենք: Ճանաչում ենք մեր հիվանդներին, նրանց ընտանիքները, գիտենք նրանց ժառանգական դրսևորումները: Մեր դեպքում դժվարն այն է, որ հիվանդներին անհատապես ճանաչելով՝ նրանց հետ հավասար կիսում ենք ցավերն ու դժվարությունները: Այս դեպքում դժվար է սառնասիրտ մնալ, չնայած, ես կարողանում եմ ղեկավարել զգացումներս: Մեր՝ առաջին օղակի բժիշկներին համար շատ ավելի դժվարանում է աշխատանքը բավարար պայմաններ ու բուժսարքավորումներ չունենալու պատճառով: Հուսանք, որ մեր առողջապահական համակարգում շուտով այդ խնդիրն էլ կտրվի լուծում: Իմ ապագա կոլեգաներին մաղթում եմ մասնագիտական հաջողություններ: Գովելի է նրանց ընտրությունը: Բժշկի մասնագիտությունն այնպիսին է, որ եթե ի օճն չեղավ այդ կոչումը մարդու մեջ, պետք չէ ուղղակի մասնագիտություն ստանալու համար սովորել այն»:

Այս խորագրի տակ ես շնորհակալություն եմ հայտնում Մուսալեռ գյուղի բուժամբուլատորիայի ընտանեկան բժշկուհի Մարիամ Խաչատուրի Սահակյանին, բժիշկ՝ ում մոտ գնալիս հիվանդը վստահություն է ձեռք բերում, որ ամեն ինչ լավ է լինելու: Նրա ժպիտը, նրա բարյացկամ մոտեցումը, պատրաստակամությունը՝ առավելագույնս օգնելու, հետևողականությունը՝ իր հիվանդների նկատմամբ ինձ ուղղակի հիացնում են: Եվ այստեղ տեղին է ցիտել ռուս հայտնի բժիշկ՝ Վլադիմիր Բեխտերևի խոսքը. «Եթե բժշկի հետ զրուցելուց հետո հիվանդը չի թեթևանում, ուրեմն նա բժիշկ չէ»: Կարծում եմ՝ յուրաքանչյուր բժիշկ, անկախ իր նեղ մասնագիտացումից, առաջին հերթին հոգեբան պետք է լինի: Հիվանդը, երբ դիմում է բժշկին, նրանից միայն թղթի վրա գրված դեղատոմս չի ակնկալում: Սիրելի՛ բժիշկ՝ Մարիամ Սահակյան, ցանկանում եմ հաջողություններ Ձեզ այս բարդ ու դժվարություններով լի աշխատանքում:

Ստորև ներկայացնում եմ բժշկիս հետ զրույցից հատվածներ, որոնք թույլ կտան ավելի հստակ պատկերացում կազմել Մարիամ Սահակյան բժշկի և մարդու մասին:

ՎԱՐԴՈՒՐԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ԵՊԲՅ ԱՐՏԱՍԱՐՄԱՆՑԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԶՈՒՋԻՉ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ

Փետրվարի 20-ին և 21-ին տեղի ունեցան միջոցառումներ «Հիշում եմ և պահանջում» խորագրով՝ նվիրված մայրենի լեզվի միջազգային օրվան և Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին: Միջոցառումները կազմակերպել էին ՀՀ սփյուռքի նախարարությունը, Երևանի քաղաքապետարանը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան:

ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում կայացած գիտաժողովում «Մեծ եղեռնի լեզվական կորուստները» թեմայով զեկուցմամբ ելույթ ունեցավ ԵՊԲՅ հայոց լեզվի ամբիոնի վարիչ, դոց. Հ.Վ.Սուքիասյանը: Իր ելույթում նա հիմնականում անդրադարձավ լեզվական կորուստների փոխհատուցման և ներկա ձեռքբերումների հարցերին: Հ.Վ.Սուքիասյանը կարևորեց այդ կորուստների փարատումն ու փոխհատուցումը. «Թուրքիան կարող է փոխհատուցել միայն տարածք ու նյութական միջոցներ, իսկ հոգևոր կորուստները միայն մենք՝ հայերս, կարող ենք փոխհատուցել ու վերականգնել»:

Սփյուռքը լեզվապահպանման և կորուստների փարատման ուղղությամբ քիչ ջանք չի գործադրել:

մասնակիցներին: Ներկաներին ոգևորեց նաև օտարերկրացի ուսանողների ջերմագին վերաբերմունքը հայ ժողովրդին և հայոց լեզվին: Նրանք խոստովանեցին, որ Հայաստանը իրենց երկրորդ տունն է, իսկ հայոց լեզուն սիրուն են իրենց



մայրենի լեզվին հավասար: Նրանց կողմից հնչեցրած հայկական ժողովրդական երգը և Հ. Սահյանի «Հայաստան ասելիս...» բանաստեղծության կատարումը բուռն ծափողույների արժանացան:

Նույն օրը երեկոյան նրանց ելույթը ջերմ ընդունելության արժանացավ Առնո Բաբաջանյանի անվան ֆիլիարմոնիայի փոքր դահլիճի հանդիսատեսի կողմից:

Հաջորդ օրը Օշականում նրանք մայրենի լեզվի միջազգային օրվա միջոցառումների շրջանակում իրենց խոսքով հուզեցին ներկաներին: Այնքան տպավորիչ էր նրանց ելույթը, որ միջոցառումը լուսաբանող լրագրողները միմյանց հերթ չէին տալիս նրանց հետ հաղորդակցվելու և իրենց հիացմունքը հայտնելու:



Միաժամանակ պետք է նկատել, որ եղեռնի պատճառով տեղի ունեցած լեզվական կորուստները փարատելու առումով Արևելյան Հայաստանում պետականության առկայության պայմաններում ձեռքբերումները մեծ չեն եղել:

Իր զեկուցման ավարտին Հ.Վ.Սուքիասյանը նշեց, որ բժշկական համալսարանում սովորում են բազմաթիվ օտարերկրացիներ՝ հնդիկ, պարսիկ, արաբ, ովքեր հայոց լեզվի ամբիոնում մասնակցում են հայոց լեզվի երկամյա դասընթացին: Դասախոսներն այդ ընթացքում այնքան գիտելիք ու հմտություններ են տալիս նրանց, որ ուսանողները, սկսելով տառաճանաչությունից, ձեռք են բերում գրավոր ու բանավոր հաղորդակցման բավարար հմտություն և կարողանում են հաղորդակցվել առօրյայում ու մասնագիտական կլինիկաներում:

Հ.Վ.Սուքիասյանը իր խոսքը փոխանցեց օտարերկրացի մի խումբ ուսանողների՝ Դելարամ Անսարին, Մեհրգադ Մոշենիպուրին (Պարսկաստան), Նազհի Դահդալին (Սիրիա), Սուրեշ Կրիշնային, Լակշմիարիյա Հատիկրիշնային, Անկիտ Չաուհանին, Սրինալ Կանդալին, Շրի Կաիդուրային (Հնդկաստան), ովքեր հայերենով պատմեցին իրենց առօրյայի, հայաստանյան տպավորությունների, ջերմ և հարազատ զգացողությունների մասին: Օտարերկրացի ուսանողները խոր ցավով հարգանքի խոսքեր ասացին եղեռնի անմեղ զոհերի հիշատակին: Օտարների շուրթերից հայերենով հնչած սրտառու և անկեղծ մտքերը մինչև հոգու խորքը հուզեցին գիտաժողովի




Օտարերկրացի ուսանողները իրենց շնորհակալությունը հայտնեցին հայոց լեզվի ամբիոնին, որը հնարավորություն ընձեռեց իրենց հաղորդակիցը և մասնակիցը դառնալու հայ ժողովրդի նվիրական տոներից մեկին՝ Մայրենի լեզվի փառաբանման տոնին: Նրանք այցելեցին և ծաղիկներ դրեցին ս. Մեսրոպ Մաշտոցի շիրիմին, ի հիշատակ հիշարժան օրվա՝ նկարվեցին այբուբեն-խաչքարերի մոտ և նորակոչիկ հայ զինվորների հետ: Օրն ավարտվեց հիշարժան խորհրդով. «Հայ ու հնդիկ եղբայրանում, ընկեր դառնում առհավետ...», - վերադարձի ճանապարհին հոգնած, բայց հոգեպես բավարարված երգում էին օտարերկրացի ուսանողները:

FOR YOU FOREIGN STUDENTS!





March 21 JOHANN SEBASTIAN BACH-330 1685 - 1750



A magnificent classical composer, Johann Sebastian Bach is revered through the ages for his work's musical complexities and stylistic innovations.

Musically, Bach was a master at invoking and maintaining different emotions.

He used counterpoint, the playing of multiple melodies simultaneously, and fugue, the repetition of a melody with slight variations, to create richly detailed compositions. He is considered to be the best composer of the Baroque era, and one of the most important figures in classical music in general.

March 1 THE FIRST DAY OF SPRING



March 23 INTERNATIONAL METEOROLOGY DAY

The first facts about weather were present long time ago. Since 17-18th centuries they've recorded everyday information about weather . And after the invention of Barometer some experiments were made for weath-

er predictions according to the changes of atmosphere pressure. In 1872 the International Meteorological organization was founded.



World Theatre Day is the creation of the International Theatre Institute . It is celebrated annually on the 27th March by ITI Centres and the international theatre community. Various national and international theatre events are organized to mark this occasion. One of the most important of these is the circulation of the World Theatre Day International Message through which at the invitation of ITI, a figure of world stature shares his or her reflections on the theme of Theatre and a Culture of Peace. The first World Theatre Day International Message was written by Jean Cocteau (France) in 1962.

The history of the Armenian Real Theatre begins at about 70 B.C. According to Plutarch, the first historically known theatre in Armenia was built during the reign of Tigran the Great. In Dikranagert he opened a great public theatre in 69 B.C., fourteen years before Pompey's first public theatre in Rome.

Tigran's son, Artavazd II, wrote several Greek tragedies, orations, and historical commentaries which survived until the second century A.D. Artavazd built the second permanent public theatre of Armenia in the old capital of Artashat. The tragedies of Euripides and the comedies of Menander were regularly produced there. He is considered the first Armenian playwright and director of Classical Armenian Theatre. Plutarch mentions that the Bacchae of Euripides, directed by Artavazd, was presented there in 53 B.C.

The theatre award ceremony is held every year in Armenia. The winners are awarded with the prize "Artavazd".

March 22 WORLD WATER DAY

International World Water Day is held annually on 22 March as a means of focusing attention on the importance of freshwater and advocating for the sustainable management of freshwater resources.

An international day to celebrate freshwater was recommended at the 1992 United Nations Conference on Environment and Development (UNCED).

The United Nations General Assembly responded by designating 22 March 1993 as the first World Water Day. Each year, World Water Day highlights a specific aspect of freshwater.



March 27

WORLD THEATRE DAY



YSMU STUDENTS ARE AMONG THE WINNERS OF "BEST STUDENT" COMPETITION

The results of the "Best Student" competition organized by the RA Ministry of Education and Science were concluded today.

The two students of the Yerevan State Medical University after M. Heratsi, Senik Matinyan, 4th year, General Medicine Faculty, and Yelena Sargsyan, 2nd year of Master's, took the honorable first place and as encouragement, they received monetary award. And Ani Yeremyan, 1st year Master's, was awarded with "Pastoral Scholarship" by the Mother See of Holy Etchmiadzin according to which her tuition fee is fully reimbursed.

Worth mentioning that the competition has been conducted in two phases: the first phase was conducted within the university by the HEIs' committees, and the second phase was conducted upon the decree to establish a committee by the RA Ministry of Education and Science.

The main criteria of evaluation by the competition committee are the progress, scientific works, public activity, professional achievements; evaluation scale of 3-10 units has been applied.

The winners of the competition have been decided



RA Minister of Education and Science Armen Ashotyan and YSMU Rector, professor Michael Narimanyan with the winners.

according to the number of highest points, and in case of equal results of candidates presented according to the fields, the commission will be guided by the highest results of annual qualification mark, i.e. the education progress.

We warmly extend our congratulations to our best students wishing them new achievements and success.

YSMU ONE OF THE IMPORTERS OF INNOVATIVE EDUCATIONAL TECHNOLOGIES IN THE HIGHER EDUCATION SYSTEM IN ARMENIA

The opening ceremony of the electronic library took place in YSMU which was attended by the RA Education and Science Minister Armen Ashotyan.

After the ceremonial opening the Minister with the HEI's management went round the hall, got acquainted with the works implemented and the procedure of computer examinations: the newly opened hall is also foreseen for those activities.

"Today we see that YSMU is one of the importers of innovative educational technologies in the RA higher education system. This electronic auditorium of around 100 seats will give the opportunity to implement two main goals: firstly it is an opportunity for students to enlarge the entrance of educational base, secondly it gives opportunity to pass examinations on computer: this gives the chance to almost minimize the communication with a lecturer, which in its turn decreases corruption risks and increases the objectiveness of evaluation", as was mentioned by the RA Education and Science Minister. He added that the circumstance of using auditorium in the learning process is of importance. "This is not only an exami-



nation hall, this is also educational technology which gives the students the chance to discover their strong and weak points", said Armen Ashotyan.

As Michael Narimanyan, YSMU Rector, informed, the newly opened auditorium will serve two goals: to improve the quality of educational process and to promote the effectiveness and objectiveness of examination process: "Since the current generation works with computers easier, we have computerized the examination process.

Computer scripts will be created for students to make the examination process more interesting and effective", Michael Narimanyan said. He also considered of importance the fact that the electronic library functioning in the library involves 1 mln informative units of international literature the database of which is in Armenian language. Worth mentioning that the hall is the second one in YSMU, and it is already one year that YSMU has another hall with electronic library.

The Prominent Doctor and Scientist Emil Gabrielyan

The special issue of the project "Doctor by Mission" initiated by RA Minister of Health Armen Mouradyan, was dedicated to the famous doctor-scientist, academician Emil Gabrielyan.

The event dedicated to well-known doctor-scientist, professional healthcare organizer, state and public figure, academician Emil Gabrielyan, was held in Yerevan State Medical University after M. Heratsi. The event was well attended by the HEI's professors and lecturers with presidency of YSMU Rector Michael Narimanyan, RA Health Minister Armen Mouradyan, deputy ministers of RA Health Ministry, famous representatives of the field, writer-publicist Zori Balayan, composer Robert Amirkhanyan and other guests.

Tatev srbazyan opened the event with pontifical blessings, after the speech of RA Health Minister Armen Mouradyan followed. "We are united by a person who was not only gifted by his organizational skills, but also could sow patriotism among us".

I would like to introduce you the decree adopted by the Government 10 days ago according to which the Scientific Center of Drugs and Medical Technology is from now on called after Emil Gabrielyan.

There is also a very nice initiative by the Gabrielyan family around which we have all gathered. The initiative is to create a fund which will have annual award to the best health organizer, best medical student will receive scholarship, and the best medical institution will receive a prize carrying its name".

On behalf of Gabrielyan family Karine Gabrielyan, the daughter of academician Emil Gabrielyan, who is a well-known ophthalmologist in the USA, expressed her gratitude.

"They say a person is alive up the time when she lives in others' hearts, and when I see this hall full of people, I would like



to say that my father Emil Gabrielyan is alive today".

This was followed by "Komitas" quartet performance.

Professors Eduard Tadevosyan, Simeon Hakhumyan and writer-publicist shared their memories about their friend.

At the end of the event a documentary film "Life as a Glow" was screened which was dedicated to Emil Gabrielyan's activities.

17-year-old Armenian Girl has Made a Revolutionary Invention



We are one of the nations in the world which has the largest diaspora all over the world. Wherever Armenians have been, besides thriving other countries they proved with their knowledge and creations that they are in the rows of

clever people, thinkers, creators, arrangers.

Today one of them is much spoken about all over the world making them feel happy and proud. 17 year-old Armenian girl living in Canada has appeared in the centre of attention of public and press. Anna who studies at local high school has invented a new device for dialysis which can be revolutionary in the health sphere. The devices of dialysis cost 30.000 dollars. Anna's invented device costs 500 dollars. It is cheap, effective, suitable to use and people can buy it and use it at homes. Dialysis is a medical procedure during which patient's blood is being cleaned. Basically patients undergo dialysis when they have problems connected with kidney .Anna declared that she wanted to create the device for dialysis which will make the process less painful for patients. "With this new

device a patient doesn't have to go to hospital 3 times a week. The majority of patients have mobility problems and the way from home to hospital is very difficult for them"- said CBS company. To make her invention she worked as a volunteer at the local hospital for a long time , examined the procedure of dialysis and observed the patients. It took her 300 hours to invent it. Anna Poggharyan hopes that one day her invention will be used all over the world. Due to this invention she gained a prize and scholarship. Hema- Quebec company suggested her a summer practice to realize her invention in real life." Humanity will benefit from this device which can decrease prices of medical service and procedures. " In general it is a wonderful initiative. "- said the head of the applicable researches of Hema-Quebec company Louis Tibon.

In 1915, leaders of the Turkish government set in motion a plan to expel and massacre Armenians living in the Ottoman Empire. Though reports vary, most sources agree that there were about 2 million Armenians in the Ottoman Empire at the time of the massacre. By the early 1920s, when the massacres and deportations finally ended, some 1.5 million of Turkey's Armenians were dead, with many more forcibly removed from the country. Today, most historians call this event a genocide—a premeditated and systematic campaign to exterminate an entire people. However, the Turkish government does not acknowledge the enormity or scope of these events. Despite pressure from Armenians and social justice advocates throughout the world, it is still illegal in Turkey to talk about what happened to Armenians during this era.

The Armenian people have made their home in the Caucasus region of Eurasia for some 3,000 years. For some of that time, the kingdom of Armenia was an independent entity—at the beginning of the 4th century AD, for instance, it became the first nation in the world to make Christianity its official religion—but for the most part, control of the region shifted from one empire to another. During the 15th century, Armenia was absorbed into the mighty Ottoman Empire.

The Ottoman rulers, like most of their subjects, were Muslim. They permitted religious minorities like the Armenians to maintain some autonomy, but they also subjected Armenians, who they viewed as "infidels," to unequal and unjust treatment. Christians had to pay higher taxes than Muslims, for example, and they had very few political and legal rights.

In spite of these obstacles, the Armenian community thrived under Ottoman rule. They tended to be better educated and wealthier than their Turkish neighbors, who in turn tended to resent their success. This resentment was compounded by suspicions that the Christian Armenians would be more loyal to Christian governments (that of the Russians, for example, who shared an unstable border with Turkey) than they were to the Ottoman caliphate.

These suspicions grew more acute as the Ottoman Empire crumbled. At the end of the 19th century, the despotic Turkish Sultan Abdul Hamid II—obsessed with loyalty above all, and infuriated by the nascent Armenian campaign to win basic civil rights—declared that he would solve the "Armenian question" once and for all. "I will soon settle those Armenians," he told a reporter in 1890. "I will give them a box on the ear which will make them...relinquish their revolutionary ambitions."

In 1908, a new government came to

power in Turkey. A group of reformers who called themselves the "Young Turks" overthrew Sultan Abdul Hamid and established a more modern constitutional government. At first, the Armenians were hopeful that they would have an equal place in this new state, but they soon learned that what the nationalistic Young Turks wanted most of all was to "Turkify" the empire. According to this way of thinking, non-Turks—and especially Christian non-Turks—were a grave threat to the new state.

On April 24, 1915, the Armenian genocide began. That day, the Turkish government arrested and executed several hundred Armenian intellectuals. After that, ordinary Armenians were turned out of their homes and sent on death marches through the Mesopotamian desert without food or water. Frequently, the marchers were stripped naked and forced to walk under the scorching sun until they dropped dead. People who stopped to rest were shot.

At the same time, the Young Turks created a "Special Organization," which in turn organized "killing squads" or "butcher battalions" to carry out, as one officer put it, "the liquidation of the Christian elements." These killing squads were often made up of murderers and other ex-convicts. They drowned people in rivers, threw them off cliffs, crucified them and burned them alive. In short order, the Turkish countryside was littered with Armenian corpses.

Records show that during this "Turkification" campaign government squads also kidnapped children, converted them to Islam and gave them to Turkish families. In some places, they raped women and forced them to join Turkish "harems" or serve as slaves. Muslim families moved into the homes of deported Armenians and seized their property.

In 1922, when the genocide was over, there were just 388,000 Armenians remaining in the Ottoman Empire.

After the Ottomans surrendered in 1918, the leaders of the Young Turks fled to Germany, which promised not to prosecute them for the genocide. (However, a group of Armenian nationalists devised a plan, known as Operation Nemesis, to track down and assassinate the leaders of the genocide.) Ever since then, the Turkish government has denied that a genocide took place. The Armenians were an enemy force, they argue, and their slaughter was a necessary war measure. Today, Turkey is an important ally of the U.S. and other Western nations, and so their governments have likewise been reluctant to condemn the long-ago killings. In March 2010, a U.S. Congressional panel at last voted to recognize the genocide.

American news outlets have been reluctant to use the word "genocide" to describe Turkey's crimes. The phrase "Armenian genocide" did not appear in the New York Times until 2004.



MARCH 8 OUR CONGRATULATIONS DEAR WOMEN!

International Women's Day is celebrated in many countries around the world. It is a day when women are recognized for their achievements without regard to divisions, whether national, ethnic, linguistic, cultural, economic or political. International Women's Day first emerged from the activities of labour movements at the turn of the twentieth century in North America and across Europe and in our country as well.

Since those early years, International Women's Day has assumed a new global dimension for women in developed and developing countries alike. The growing international women's movement, which has been strengthened by four global United Nations women's conferences, has helped make the commemoration a rallying point to build support for women's rights and participation in the political and economic arenas.

International Women's Day is a time to reflect on progress made, to call for change and to celebrate acts of courage and determination by ordinary women who have played an extraordinary role in the history of their countries and communities.

This year's theme, "Empowering Women - Empowering Humanity: Picture It!" envisions a world where each woman and girl can exercise her choices, such as participating in politics, getting an education, having an income, and living in societies free from violence and discrimination.

In 2015, International Women's Day will highlight the Beijing Declaration and Platform for Action, a historic roadmap signed by 189 governments 20 years ago that sets the agenda for realizing women's rights. While there have been many achievements since then, many serious gaps remain. This is the time to uphold women's achievements, recognize challenges, and focus greater attention on women's rights and gender equality to mobilize all people to do their part.



Woman is the companion of man, gifted with equal mental capacity...

If by strength is meant moral power, then woman is immeasurably man's superior...

If non-violence is the law of our being, the future is with women...

Mahatma Gandhi

ARMENIA

Spring by its colors and freshness fills our hearts and souls with new hopes, warmth and great expectations of life. Spring makes us feel happy also with its holidays and victories. One of the most beautiful holidays is one which is celebrated in March, the international day of women. This day is especially expected by girls and women who look forward to this holiday impatiently. The holiday has a long history. This beautiful holiday has been celebrated for a century now but it was born as a challenge for the protection of women rights. Still at the beginning of 20th century women could gain this success due to strong will and purposefulness.

In Armenia the 8th of March is officially celebrated since 1921.

But in Armenia women enjoy not only the international day of women but also a whole holiday month till the 7th of April as the month of glorification of women and beauty. In the West, International Women's Day was first observed as a popular event after 1977 when the United Nations General Assembly invited member states to proclaim March 8 as the UN Day for Women's Rights and International Peace.

Armenia observed the holiday both in the Soviet period and in the early years of independence. In 1996, the day was annulled; it was replaced by April 7, which was celebrated as a Day of Maternity and Beauty.

IRAN

The first celebration of 8th March in Iran, in 1922, took place in Rasht [North of Iran] organised by "the Society of Women's Prosperity Herald". However, there is no other record of further events being held by this society. A Few years later records show that celebrations took place publicly in 1928 organised by the "Organisation for Women's Awakening" [sazeman-e bidariy-e zanan]. Since then, there are no records of public events commemorating 8th March. However, this event was celebrated secretly and in private in the homes of some of the elite women. The year 2000 was a turning point in the celebration of International Women's Day and the open activities of women. In this year, Noushin Ahmadi Khorasani invited a group of women to openly and publicly celebrate 8th March. To the surprise of the organisers, more than a 1000 people attended, and the widespread news of the event grabbed the attention of society.

The 8th March is when Iranian women - encouraged and appreciated by the International community on one hand and under internal threats and pressures on the other hand - celebrate this great day. Happy International Women's Day to these passionate hard working women and their international sisters!

INDIA

The concept of celebrating Mothers Day on the second Sunday of May is very new in India and it can be said that in a time span of less than a decade, Mothers Day has been a great success. In the presence of umpteenth number of existing festivals, it is a remarkable achievement for a foreign festival to make its presence felt in the vast and culturally diverse country like India.

Globalisation, to a great extent has helped to make this Western, or mainly American festival to make its presence felt in India. Besides interaction of Indians with the West is at an all time high. A lot many people have been in US or have their relatives staying there. Internet and satellite revolution has made information about other cultures more accessible than ever. But the reason behind the success of Mothers Day in India can be attributed to the emotions which are attached to the festival. Mothers are mothers everywhere, they are as much loved and respected in India as in any other part of the world. Perhaps Indians have always felt the need of such a day which is devoted solely to mothers. Mothers Day gives them all the opportunity to celebrate such a day.

